

ԱՐԱՐԱՏ

ամսագիր

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻՒ Թ. ՅՈՒՆՈՒԱՐ 1870 Բ. ՏԱՐԻ

ԿԱՐԵՒՈՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

ԵՒ

1870 ՆՈՐ ՏԱՐԻ

Հարկերը կամ կարօտութիւնները կ'ծնանին պէտքերը· պէտքերը կը լծորդուին խորհրդոց և կամաց հետ· կամք և խորհուրդք կը հետևին նպատակաց · նպատակք առանց գործոց ոչինչ և անպետք են· գործք առանց կարելութեանց և փորձոց զուր և ապարդիւն են· իսկ կարելութիւնք և փորձք են ժամանակի գործք, զորս ձեռք բերելոյ ու արդասաւորելոյ համար՝ բնականաբար՝ թէ շատ և թէ սակաւ միջոցի ու համբերութեան կ'կարօտի: Այսպիսի ենթադրութիւնք անցելոյն հետևութիւններէն կը գոյանան, զորս անցեալէն կընդունի և կը յառաջացնէ ներկայն· իսկ ապառնին նոցա՛ արդիւնքը կ'արտադրէ և նպատակները կը պսակէ:

Մարդկային սերունդը ենթարկուած է

22

այսպիսի դրութեան, որ բազմակերպ ընկերութեանց և ցեղից բաժանուած, իւրաքանչիւրը կ'զգայ իւր առանձին հարկն ու պէտքերը, կը յղանայ և կ'ընտրէ խորհուրդներ, կ'որոշէ նպատակ, կը փութայ զայն գործով արդիւնաւորել, կ'ենթարկէ փորձոց, և վերջապէս՝ համբերութեամբ և անընդհատ և անձանձրոյթ ջանիւք վայելել կը յաջողի արդիւնք: Բնականաբար անհնար է որ այսպիսի և իցէ թէ ընդհանուր և թէ մասնաւոր նպատակի յղացման հետ 'ի միասին՝ անդէն անդ կատարելագործել, մանաւանդ շատ անգամ և շատ պարագայից մէջ՝ նախորդը կը յղանայ և կ'սկսանի և յանձնելով յաջորդին, յաջորդը կը շարունակէ, և ուր ուրեմն յաջողութեամբ կամ ընդհակառակն կ'արդիւնաւորէ:

Պարզեմք մեր նպատակը:

Մեք Հայերս և մարդկային սերունդին մէջ առանձին մի ընկերութիւն կամ Ազգ կը կազմեմք, և անշուշտ ունեցած եմք կամ կ'ունենամք և ինչպէս ունիմք ըստ մեզ հարկ կամ կարօտութիւն ու պէտքեր, և անցեալ հին ժամանակները կը թողումք այսքան միայն յիշատակելով, որ «ընդ հուր և ընդ ջուր» անցած և մեզ վերջապէս աւանդեալ ունիմք Ազգայնութիւն, Կրօն և Լեզու զանազան յիշատակներով: Իսկ զայնս ներկային մէջ պահպանելոյ, յարատև զարգացնելոյ և երբեմն առաւելապէս փառաւորելոյ բաղձանօք և ակնկալութեամբք՝ ենթարկուած եմք նաև այնպիսի կարօտութեանց և անհրաժեշտ պարտաւորութեանց, զորս անցելոց բարի և վատթար դիպաց հետ բաղդատելով փորձառութեանց ուղիղ կշռոյ մէջ, արժան է քաղել մեզ այնպիսի խրատներ և օրինակներ՝ վնասակարէն զգուշանալոյ և օգտակարին հետևելոյ համար, որպէս զի ժամանակիս հարկերը՝ որք և կը ծնանին ամենակարևոր պէտքերը, կարողանան յաջողել խոյս տալով 'ի փորձանաց և նկրտիլ բարենպատակ ապառնւոյ:

Ժամանակիս հարկեր ու պէտքերն և բարենպատակ սկզբունք անշուշտ առանց պատճառի չգոյանան և գտանելի լինին: Ուստի այն հարկերը՝ որ զմեզ ոգևորած են, և այն նպատակները՝ որ զմեզ սիրալիր և խանդակաթ համակրութեամբ գրաւած են, որքան որ փոքր և չնչին հետևութեանց ենթարկուած լինին, այնքան նշանաւոր և արդիւնաւէտ կարեն հանդիսանալ. և որոց պատճառը եթէ չար է, բնաջինջ կ'անհետանայ, իսկ եթէ բարի է, իրականութեան կը փոխուի:

Արդ, ի՞նչ են ուրեմն զմեզ տագնապող այժմեան Հարկերն: — Տգիտութիւնը և մանաւանդ կորստեան վտանգը: — Ի՞նչ են պէտքերը: — Լուսաւորութիւն և դաստիարակութիւն: — Ի՞նչ խորհրդով: — Իսպառ ջնջել տգիտութիւնը և նորա ապագալի հետևանքները: — Ի՞նչ է վերջին նպատակ: — Յառաջադիմութիւն և բարի ապառնի:

Այն անցեալը՝ որ երբեմն մեր նախնեաց փառք և երջանկութիւն կը ձօնէին, և այն անցեալը՝ որ տակաւին կը տառապեցնէ զմեզ այլ և այլ թշուառութեանց խորտակուած, ոչ առաջինը կարեմք վերակենդանացնել, և ոչ վերջինը կը յաջողեմք անհետացնել՝ ցորչափ դաստիարակութիւնը, լուսաւորութիւնը և յառաջադիմութիւնը չզարգացնեմք ամենայն ուրեք համայն մեր սիրելի Ազգայնոց մէջ:

Ստոյգ է, եթէ մեր յառաջակայ վտանգը կրկին չըլլինէր և միայն տգիտութիւնը երևէր, յանժամ առաւել դժուարութիւն չպիտի կրէինք: Բայց նաև անուրանալի է,

գէ յառաջակից վտանգին և թշուառութեան կարապետ և շուտիկ յաղթողն գլխաւորապէս տգիտութիւնն է, որ է մայր ստորամոլութեանց, երկպառակութեանց, կուսակցութեանց, ատելութեանց, կործանմանց և ամենայն չարեաց: Ուստի ջնջեմք տգիտութեան, թէև ոչ իսպառ կ՚անհետանայ վտանգն, բայց ո՞վ չգիտէ, եթէ զօրաւոր և անյաղթելի ախոյեան կը հանդիսանայ լուսաւորութիւնը նորա դէմ. ընտրուիմ՝ ուր լոյս է, անդ խաւարը անկարող է մնել. ուր արեւը պայծառ կը շողշողէ, անդ՝ անձրևը չէ կարող անցալ և վնասակար հոսանք գոյացնել, ամպերը կայծակնացայտել և այլն:

Քան զայս առաւել կարևոր և զօրաւոր մանաւանդ յարմար ուրիշ միջոց չկարեմք կամ չունիմք գտանել նկատմամբ մեր Ազգի յառաջադիմութեան և բարեկրթութեան, երբ անցեալ դարերը երևակայած կը բաղդատեմք ներկայ դարուս հետ:

Սակայն լուսաւորութիւն բացագանչելով ի՞նչ օգուտ, վերացեալ գաղափարի զուր արտայայտութեամբ զատ. ոչինչ օգուտ չունիմք. պէտք է իմանալ նախ նորա միջոցները և գործադրել իրականապէս ամենայն անդ: Պէտք է նա և յարատևել, և ոչ մի ժամ և ոչ մի րոպէ թոյլատրելու չզեջանիլ ՚ի զուր կորնչելու: Որովհետև ինչպէս անցեալը ամէն րոպէները մէն մի նշանակութիւններ կնքած են մեր Ազգի համար. նոյնպէս ներկայիս իւրաքանչիւր րոպէները ապագայի համար կամ աւետաբեր և կամ դժբաղդ վճիռներ կը տնօրինեն, կամ Աւետեաց և կամ Սոդոմ—Գոմորեան երկերը ժառանգելու: Որք արդարև մէն մի հանելուկներ կը ձևացունեն, զորս ուշուրու—ըն—նը կամ ծու—լու—ըն—նը կը յաջողի լուծել և բացատրել ապառնւոյ մէջ:

Ուստի մեր այժմեան նկատելու ամենակարևոր կենտական անհրաժեշտ խնդիրը՝ այս պէտք է լինի, որպէսզի բարեկիրթ և լուսաւորեալ ազգաց յառաջադիմութեան հասնիմք, ուսմանց, արհեստից, վաճառականութեան և ամէն գիտութեանց մէջ. բոլորովին եւ չմնամք ամենէն տգիտութեան խաւարին մէջ թաղթափելով:

Երջանաց ստուերանման պատրանքներու սրարշաւ բոլորուածքէն այն ժամանակ միայն կարող եմք ճշմարտապէս ուրախանալ, երբ կը տեսնեմք, որ մեր Ազգի անհրաժեշտ պիտոյքները օր քան զօր կը պատրաստուին, ամէն կողմ հայթայթուած կը գործադրուին. և մեք համարձակ կ՚ասեմք, եթէ կը զարգանամք և կը յառաջադիմեմք ես և կը մերձենամք բարի և օգտաւէտ ապառնւոյ:

Ուստի մեզ կը մնայ ներկային և ապառնւոյն համար ուշերուած և գրաւուած խանդակաթ սիրով գործադրել ինչ որ կարևոր է, ինչ որ բարի և ազգօգուտ է. ապա թէ ոչ, երևակայելով անցեալէն լոկ մեր նախնեաց բաղմանշխարի երջանիկ օրերը, և ընդհակառակն՝ անթիւ և անհամար տառապանաց և նեղութեանց ժամերը, կարող չեմք զմեզ խուսափեցնել այն անդունդէն, որ ժամանակաց թաւալգլոր դառնալովը կըսպառնայ կլանել, և ժառանգել տալ մեր սերնդոց այնպիսի ապառնի, յորում երջանիկ կեանք և անդորրութիւն կը գուշակուէին: Չեմք կարող մեք ուրանալ և չը խոստովանիլ, որ նախնիք մեզ աւանդեցին ինչ որ այժմ ունիմք, աւանդեցին մանաւանդ բարի և չար օրինակներ, յորոց փորձ հետևութիւնք ընտրած և ընդունած, մեզ իսկ սրբազան պարտք է ներկային մէջ գործել ըստ արժանւոյն:

Անցեալը միշտ իւր գործողութիւնը կը

կատարէ. ներկայն կը մնայ նոյա ընտրութիւն և շարունակութիւն կամ վերջ տալը։ Վերջապէս անցեալէն արդ պէտք է ուսած ըլլալնիք, որ մեր Ազգի համար անմիաբանութիւնը և անտարբերութիւնը ի՞նչ վտանգ պատճառած է և կ'պատճառէ, և թէ ցարդ ի՞նչպէս կորուսած ենք խուսափել և յետ այսօրիկ ի՞նչպէս կարենք զերծանիլ և որպիսի՞ միջոցներով։ Մենք կը կրկնեմք և կ'երեքկնեմք, որ՝ անշուշտ ազգային կրթութեան և լուսաւորութեան ընդհանուր տարածմամբ, որով Ազգային միութիւն և ամբողջութիւն և իրական յառաջադիմութիւն կ'ապահովուի անտարակոյս։

Մենք երբէք իրաւունք չը պիտի ունենամք տրտնջալու և գանգատելու այնինչ կամ այնինչ անձէն և կամ ընկերութիւնէն, եթէ մեզ վնաս կը պիտէ (թէ և հակառակ մտադրութեան վասն ակզբանց). որովհետև նա ևս ունի առանձին ցեղական եռանդ և զգացմունք և հանդարտ խիղճ այդպէս ջանալու. բայց յանձամ ամօթ է մեզ և նախատինք, երբ մեք խոկ մեր պարտաւորութիւնք և եռանդներ չզգալով՝ անտարբեր կը կենամք, և առանց գործելու և ջանալու երեւակայական սնոտի և վերացական նպատակներ կ'երազեմք. այո, նուիրական խիղճ պարտք է մեզ ևս ինչ որ արժան և անհրաժեշտ է, գործել ի սէր Եկեղեցւոյ մերոյ սրբոյ և Ազգի։

Զայս ընդունելով անցեալէն փորձառութեամբ՝ մանաւանդ և ներկայն կը պահանջէ ցայն, ուստի սորա համար պիտի գործեմք փորձառութեամբ ներկային մէջ։ Եւ ինչ որ անցեալին մէջ ձեռնարկուած է մեր Ազգի նկատմամբ՝ անձնանուէր Ազգայնոց շնորհիւ, առանց սնոտի բծախնդրութեան, առանց անօգուտ վէճից և կուսակցութեանց, առանց կրօնական խնդիրներ յուզելոյ և զազգ պառակտելոյ, առանց օտարից օգտին ծառայելոյ, առանց անձնականը քան զԱզգին օգուտ նախադասելու՝ շարունակեմք նոր ներկայի մէջ՝ ջանալ և գործել Ազգի և Եկեղեցւոյ ապագայի անձկանօք։ Հոգամք և աշխատիմք ամենայն տեղ երկսեռ ուսումնարաններ ունենալ հիմնաւոր եղանակօք և կանոնօք բարեկարգուած. որովք՝ ուսումը, գիտութիւնը, լուսաւորութիւնը և կրթութիւնը կընդհանրանայ մեր Ազգայնոց մէջ։ Եւ այսպիսի անձկանօք և նպատակօք պիտի դիմեմք և գտնեմք նոր տարիներ, զորս և պիտի սիրեմք շնորհաւորել բարեմաղթելով միմեանց, ինչպէս և Արարատ այսպիսի բաղձանօք և ակնկալութեամբ կը շնորհաւորէ և կը բարեմաղթէ իւր հարազատ և սիրելի որդւոց համար՝ ներկայ 1870 նոր տարւոյ մուտքը, խնդրելով միանգամայն՝ զի իւր հարազատ և սիրեցեալ որդիք բարեհաճին ամեն Ազգօգուտ յօդուածոց սիրալիր ընդունելութեան և բարի բարի գործոց և ձեռնարկութեանց նախանձիլ և հետևիլ խանդակաթ։ Ա.

Շնորհաւոր քեզ նոր տարի, Արարատ.
Նո՛ր զարդարեա՛ զճերմակն գլուխդ ազատ։

Ողջո՜յն քեզ, քա՛ջդ Արարատ, ողջո՜յն Նոյեան Տապանիդ.
Պարձա՛ն ողջամբ 'ի քո տուն՝ յօտար ուղւոյդ բազմավիշտ.
Շրջա՛նդ զհին, գիտե՞ս դու, չափեաց Արփին ոսկեհեր,
Նորոյդ եղև ձեռնամուխ քնքուշ մատամբք լուսաբեր։

Աշխարհակուլ ջուրց հեղեղ այնմինչ պատէր զերկրաւ շուրջ,
Տխուր զքուն մահաբեր սրսկէր 'ի կեանըս համուրց,
Զայն հեղեղին ոստոստ յաւիտենիցն յանդնդոց,
«Լերինք, յինէն տուք տեղի, թէ ոչ՝ առից զձեզ յիմ ծոց»:
Մինչդեռ Թաբոր և Սինայ, Հերմոն, Նեմա և Վեսուվ
Լերամբք բոլոր խոնարհեալ՝ ջուրց խորդալն յալեաց ծուփ,
Բայց ծերունի զքոյդ գագաթ տեսեալ Նոյին ալեւոր՝
«Ի քեզ, ասէ, Արարատ, Տապանս յանձնեմ հրաշալոյս»:
Դու ես, ասէ, հնացեալց 'ի բով փորձեալ աշխարհի.
Դուք միմիայն պահպանեն տուեալ զաւանդն 'ի յարգի.
Ընկալ դու՝ հին Արարատ, զիմ Լաստափայտ 'ի քո ուս,
Պարք Աստեղաց քանի կան, և կայ Արփին գեղալոյս:
Ընդ հաշտութեան սեղան սուրբ կազմեալ Լերինդ 'ի ստորոտ՝
Նուէր սրտին զուրբան յԱթոռ Վեհին անկարօտ,
«Իմ սրտի ջերմ կնդրուկ քեզ հաճեսցի, ասէ, Տէր,
Ի սէր Սեթայ նախնւոյ Հօրս և Աբելայ սրբասէր:
Օրհնեա, Աստուած իմ հզօր, Տապանակիրս Մասիս,
Ուր երախտեաց մեծագործ պահեմ անջինջ զմաս յիս.
Մինչ զոռայլին ալեք ջուրց առիս 'ի դոյզ խորխոտահունչ,
Ի չնչին փայտ Տապանի լռեցուցեր անմռունչ:
Լուեա, Տէր, ըզՍորա Թշնամեաց շուրթն և լեզու.
Զի Արարատ կացցէ ցանկ ընդ պէմ նոցա ահարկու.
Հայրենաւանդ 'ի Կրօն սուրբ պահեա զՍա հաստատուն,
Վեհք Հայրապետք հոգեկիր 'ի սմա կացցեն կանգնաղունդ:
Նոր էր յայնժամ նոր տարի քեզ Արարատ, նոր կաղանդ,
Քանզի յերկրէ ջնջեցաւ մոլեգնելոց հին աղանդ.
Աշխարհ 'ի քէն աճում նոր, նոր ընկալաւ և Կրօն,
Զոր ողջունեաց հաւատով սուրբ Տերունին գերդզօն:
Այս բանիս արձագանգ տայցեն լերինք համօրէն,
Տայցէ և ինձ Արագած, որ ինձ խնամեաց հայրօրէն,
Ընդ իս զերանց կցորդեալ զանոյշ ձայնիցն զգեղգեղ՝
Յօրհնելոյդ կացցուք 'ի բաղդին և նոր տարւոյդ շնորհաւեղ:
Յուլիանէն չարանենգ չեկայց արդեօք քեզ 'ի վէգ,
Ու նորա պիղծ ժանտ լեզու չարամի՞ զքեզ սրտաբեկ.
Գիտեմ, այո ոստաց, բայց զայն լեզու հայհոյիչ՝
Մեծս Հայրապետ Վեհընտիր կարկեաց բանիւ աղօթից:
Արմունջ սրտիս թող ելցէ վերին կապոյտ 'ի կամար,
Տալ Զեզ նոր սիրտ, նոր հոգի և նոր նուագն Ազգաւէտ.

Զի Հայկական Սոփերք սուրբ Նախնեաց մերոց հոգելից
Տունջեան 'ի լոյս ենկեցեն խաւարապատեն 'ի բանտից:
Գնաս բարեաւ, Արարատ, սրտի Հայոց քաջալեր.
Գնա, զայս որ բաղձանօք սիրով նոցա առեալ,
Վարժեա սիրոյդ զմակոյկ յանհուն ծովուցն ասպարէզ.
Գնա, զպանդուխտս՝ խնդաց Հայոց զթով զգուեր, Տէր ընդ քեզ:

Միաբան Լուսաւորչեան Վանից Մանուէլ Սարկաւագ Ճամճեանց,

ԿՐՕՆԱԿԱՆ

Եպիփան Եպիսկոպոս

ԵՒ ՆՈՐԻՆ ՃԱՌ

(Շարունակութիւն)

Արդ որ ծածկագէտն է յամենայնի՝ Յիսուս[1], զխոստացեալս զնոցայն. և 'ի նմին աւուր միաշաբաթւոջ, յորում և պատուեցաւ ոստովք ձիթենեաց և արմաւենեօք՝ մտանելով 'ի քաղաքն Երուսաղէմ: Եւ էր ըստ արեգական տոմարին յապրիլի ամսոյ 'ի վեցն: Իսկապէս զխաղեցաւ լուսնին տասն, յոր և զգառնն արգելուլն պատրաստ դնել զատկին զենման: Օն իսկ և նոյն ինքն էական Բանն Հօր՝ յայնմ նուագի առեալ Հրեշտակապետին Գաբրիէլի՝ արգիլեցաւ յարգանդի կուսին վասն Արարածոց փրկութեան. 'ի ժ. նիսան: Այլ և արար 'ի նմին աւուր իւր խորհրդական և փրկարար:

Քանզի և 'ի մատնելն իւրում 'ի տուն Գամաղիելի՝ հաւատարիմ Վարդապետի, և նորա որպէս ուսեալ 'ի մանկանցն գնաց ընդ յառաջ Տեառն Յիսուսի, և ունէր դաստառակ մի մեծագին որպէս զկաչանի մի պատուական և սպիտակ որպէս ձիւն, յօրինեալ ծայրօք որպէս թագաւորական ծիրանի մետաքս կարմիր և կանանչ փոխեալ ոսկւով, և տարածեաց զայն առաջի Տեառնորդւոյն արարածոց Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ[2]: Եւ Տէր խոնարհեալ ամբարձ զայն երկու ես ձեռօքն, և որպէս թէ լուացեալ ես էր, և արկ խաչանման զԱստուածային պատկերաւն՝ վերուստ 'ի վայր բերելով:

Օն անդր և նկարեցաւ 'ի դաստառակն՝ պատկերն անձեռագործ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, իսկապէս 'ի ժ. լուսնական ամսոյ՝ որպէս և վերագոյն ես ասացաք. և տայ 'ի Թովմաս. և տեսեալ ամենեցուն երկրպագեցին Աստուածային նկարագրեալ պատկերին. և Թովմաս ծալեալ զթուղթն և զսուրբ դաստառակն և պահեալ 'ի վարշամակի, որ և այն գեղեցիկ և սպիտակ էր

1) յՅրդն պակասէր Յիսուս.

2) յԶրդն Տէրամ:

յոյժ, և տայ յԱնանէ և յոյս ընդ նմա. և նոքա անդէն 'ի խոնարհ երկրպագելով Արարողին Յիսուսի՝ մեծաց շնորհ ունելով գոհացողական բանիւ: Եւ ելեալ գնային փութանակի մեծաւ խնդութեամբ 'ի փառս Քրիստոսի Թագաւորին Երկնաւորի, և հասեալ ի քաղաքն . . . որ և այսօր կոչի, ...[3], և մտեալ 'ի քաղաքն սակս պիտոյից, և ոչ կամեցան զայն մուծանել 'ի քաղաքն, որպէս իմաստացեալ թէ գուցէ մաքսաւորացն գիտացեալ զայն, ազդ առնեն[4] յարքունիս, և լինի յափշտակեալ առ 'ի մէնջ: Եւ անդէն իբրև 'ի պահարանի ամրացուցին զսուրբն զայն նկարագիր դնելով 'ի մէջ երկու փոքրագոյն աղիւսաց, զոր և արուեստաւորք եփեն հրով, որ և այդ ասի Կղմինտր:

Եւ առեալ Անանէ զանխլաբար 'ի ներքոյ վերարկուին, և դնէ 'ի պատուհանս պարսպի նետաձգին և արտաքոյ քաղաքին, և ոչ ժամանեցին ելանել, զի կանխեալ փակեցաւ դուռն քաղաքին: Օն իսկ և զգիշերն ամենայն պահապանք քաղաքին տեսանէին զլոյսն գերադանց, զի ճառագայթեալ փայլէր 'ի վերայ պարսպին, երեք բուրգն ընդ մէջ լինելով և աւելի[5] և ոչ կարէին ճշգրտել զտեղին զի պահեալ ևս լինէր յԱստուծոյ: Եւ առ վաղիւն ինքն իսկ Անանէ որպէս 'ի չմեղս լինելով[6] առեալ գնայր զճանապարհս իւր, ընդ նմին և այլքն բազում խնդութեամբ: Իբրև մերձ եղեն 'ի քաղաքն իւրեանց՝ որ և հասին գալով փութանակի յաւուրս երկուտասան, և պատկեր աւուրն ուրբաթ, յինն ժամուն: Եւ յանկարծ սաստիկ ձայն անկեալ ապշուցանաց և սարսատակէր, և նոցա երկուցեալ՝ ոն անտի և փութացեալ ընկեցին զսուրբն 'ի ջրհորն որ մերձ էր առ նոսա, և էր հեռի 'ի քաղաքէն իբրև հինգ կամ վեց ասպարիսօք[7], անդէն շտապով հասին 'ի քաղաքն փախուցեալ երիվարօք. և ոմանք խնդութեամբ եկեալ աւետիս տալով պատմեցին Աբգարին վասն գալստեան սրանցն: Եւ նա ուրախացեալ յոյժ հրամայեաց գալ առ ինքն: և մեծաւ պատուով ընկալեալ ողջունէր զնոսա. և նոքա զոր լուան 'ի Տեառնէ Յիսուսէ[8] պատմեցին առաջի Աբգարին և մեծամեծ աւագանւոյն, եսուն և զգիրն. և առեալ զայն յատենաւոր համբուրէր յաչացն և յերեսացն, և 'ի վերայ գլխոյն բարձրացուցեալ, և ապա 'ի վայր յերկիր խոնարհութեամբ երկիր պագանէր: և առեալ Ատենադպիրն ընթեռնոյր, և արքայն յատենաւոր[9] ամենայն մեծամեծօքն կալով և ունկնդրութեամբ լսէին. և 'ի վճարել Աստուածային բանիցն անդէն թագաւորն և ամենայն մեծամեծ նախարարքն հանդերձ ռամիկ ամբոխիւ որ յարքունիս, ժողովեցան յայնմ հանդիսի: Եւ դարձեալ երկրպագեցին փառս վերառաքելով անուանն Յիսուսի Քրիստոսի որդւոյն Աստուծոյ:

Եւ բազմեալ Աբգարն և արժանաւորքն, և մեծարեալ զԱնանէ և զորս ընդ նմա, բազմեցոյց մերձ 'ի յաթոռ թագաւորութեան իւրոյ[10]: Եւ իսկոյն Անանէ յարուցեալ սաստ զերացն կալոց, և նա վերստին ուրա-

3) Յերեսին օրինակսն եւս բաց թողեալ էին տեղիք կրկին անուան քաղաքին ըստ հնոյն եւ ըստ նորոյն, զոր եւ մեք անցաք կէտադրութեամբ:

4) յ2րդն առնիցեն.

5) յ2րդն պակասէր և առէլ:

6) Ի գաղափարին ջնջեալ էր որպէս ի չմեղս լինելով:

7) յ3րդն պակասէր սատի մինչեւ ...

8) յ3րդ օրին. յաւելուր Քրիստոսէ:

9) ի ղաղափ. կրնար եղեալ գոլով յատենաւորն ջնջեալ էր:

10) ի ղաղափ. էր:

խայտայր յոյժ, և խնդայր[11] հանդերձ ամենեքումբ որպէս և լուսաւ, սակս կենդանացելոյ պատկերին Տէրունական. և յայսմ աւուր ոչ կարացին ելանել, քանզի նսեմացեալ էր, և առ վաղիւն որ էր շաբաթ, հրամայեաց ամենայն բազմութեամբ քաղաքին պատրաստ լինել՝ արանց և կանանց, ծերոց և տղայոց: Եւ ապա կազմել զքաղաքն և զպարիսպն և զամենայն փողոցամէջսն, և զհրապարակս ոսկեհուռն դիպակօք. և կանանչացեալ և ծաղկեալ ոստովք 'ի պտղաբեր ծառոց. նա և ամենայն ումեք 'ի մեծամեծաց մինչև ցփոքունս պայծառանալ հանդերձիւք, մինչև յաղքատս. և խրախանալ 'ի փառս Յիսուսի Քրիստոսի, ունելով մոմեղէնս գունակ գունակ, և ծխանելիս, և կնդրուկս որպէս և վայելէր Թագաւորի և Որդւոյ Աստուծոյ:

Օն իսկ և[12] Աբքայն Աբգար յարքունի տանէն հրամայեաց առնել մեծագոյն մոմեղէնս երեք հազար 'ի գոյնս երեք, սպիտակ, կարմիր, կանանչ, և ոսկեզարդ: Եւ ապա բառնալ զայն մեծամեծ Աւագանւոյն, և այլ մանրագոյն[13] երկոտասան բիւր, առնուլ ռամիկ զօրացն, և կրակարանս ոսկիս բազումս լի հրով, և ծխանելիս, և կնդրուկս, և զամենայն փողս կառածոյս, և զերգարանս խնդութեան և զբօսանաց: Եւ յերեք ժամ շաբաթ աւուրն այնպիսի պատրաստութեամբ ելին 'ի քաղաքէն, և գային հանդարտութեամբ և երգարանօք, և քնարիւք գովելին զամենաթագաւորն զՔրիստոս. և ինքն Աբքայն 'ի ծայրս մատանց ոտից և ձեռացն առաւել ևս ունէր զցաւն, և ոչ կարէր ըստ կամս գնալ, այլ որպէս կառս յօրինէր: Եւ արք երիտասարդք բարձեալ տանէին զնա զգուշութեամբ: Եւ էր անդ յայնմ աւուր տեսանել զմայրաքաղաքն ունայն յամենայն բնակչաց իւրոց, որոյն 'ի ծննդականաց և 'ի հիւանդաց. և հասեալ 'ի տեղին՝ և արս ճարտարս և հաւատարիմս իջուցեալ 'ի ջրհորն հանին զԱստուածանկարեալ դաստառակն և զմի աղիւսոյ նման կղմինդրն, և միւսըն այլ[14] մնաց անդէն կամաւ Յիսուսի Քրիստոսի, առնել բժշկութիւն յաւիտեան անուամբ Թաշկինակին:

Օն անդր և տեսեալ արքայն զդաստառակն պատեալ սուրբ և սպիտակ վարշամակաւ, և ահա ցամաք ոչ ունելով հիւթ ջրոյ. և այնու զարմացեալ տայր փառս Քրիստոսի: Եւ ապա Անանէի բանալ որպէս և պահեալն էր: Եւ առեալ առաջի Արքային սկսաւ բանալ, և անդէն հոտ անուշութեան բուրեաց մինչև ապա Արքայն 'ի բաց տանել զամենայն ծխելիս և զկնդրուկս, ասէ, այսէ հոտ կենդանութեան՝ որ հաւատան զՔրիստոս Աստուած և Տէր կենդանեաց և մեռելոց: Եւ հայէր Արքայն մեծաւ զգուշութեամբ և երկիւղիւ:

Եւ յորժամ պարզեաց Անանէ զԱստուածանկար դաստառակն ընդ դէմ Արքային, ճառագայթեաց լոյսն համասփիւռ՝ մինչև ծածկեալ եղև լոյս Արեգականն. իսկ անհամար մոմեղէնաց և ջահիցն բնաւ ամենևին ոչ երևէին: Օն իսկ և ոչ զօրէին տեսանել զմիմեանս. այլ և 'ի ձայն բարձր գովէին զԹագաւորն երկնաւոր զՔրիստոս, ազգի ազգի երգարանօք. և քնարիւք: Եւ մերձ կացեալ Թագաւորն երկիւղիւ երկիրպագանէր, և առեալ երկու ևս ձեռօքն պատարաստաբար արկանէր զերեսօքն և արտա-

11) յ2րդն. խնդրէր:
12) յ3րդն, պակասէր և:
13 յ2րդն. պակասէր և այլ մանրագոյն:
14) յ2րդն. պակասէր այլ:

ուէր յոյժ առ անչափ խնդութեանն[15]:

Իսկ անդէն ազդեցեալ առ նա սուրբ Հոգւոյն Աստուծոյ, և սկսաւ առնել զաղօթս զայս խորհրդական և ողբաձայն եղանակաւ,«Տէր իմ և Աստուած Յիսուս Քրիստոս, յերկսայ քոյ խրատունք ինձ լինիցի. և աչք իմ տեսցեն զուղղութիւն, և լուսով երեսաց քոց տեսից զլոյս հաւատով 'ի փրկութիւն: Ես թագաւորս ծառայ քոյ և մահկանացու՝ ըստ զկեցելումն ունկնդիր եղեց քեզ յայսմհետէ թագաւորիդ անմահի: Զի օրէնք 'ի քէն եղեն, և դատաստանք քո լոյս հեթանոսաց. և եկից զԱստուածային նկարագիր Քո պատկերդ որպէս և պսակ պարծանաց և առաւել բարձրագոյն[16] քան զթագ անցաւորիս 'ի վերայ գլխոյ իմոյ, 'ի փառս ինձ լինելոյ և յօգնականութիւն ընդ դէմ երեւելի և աներևոյթ թշնամեաց: Ըստ այնմ որ ասեն, դի՛ր խոյր 'ի գլուխ քո 'ի փառաց յաւիտենականին Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի. և որպէս ծագեաց ապարանին 'ի բարձանց և լուսաւորեաց զնստեալս 'ի խաւարի և 'ի ստուերս մահու: Իսկ արդ Տէր իմ և Աստուած Յիսուս Քրիստոս, ուղղեա զոտս իմ 'ի ճանապարհս խաղաղութեան, և քեզ փառք յամենայն եղականացս»: Իսկ 'ի կատարման մաղթանքութեան, իսկոյն յօնքն՝ և արտևանունք աչացն բուսեալ՝ եղեն կարի ևս լուսաւորոն. և ծայրք մատանցն ձեռացն և ոտիցն որ կոճոտեալ ևս էին 'ի դառնագոյն և դժնեայ ցաւոցն, ամփոփեցեալ կազմեցան զընկամբքն և պճղամբքն, որպէս և մեծ մասն ցաւոց բժշկեալ եղև յամենայն մարմնին: Իսկ տեսեալ առինքն զողորմութիւնն Աստուծոյ, և 'ի ձայն բարձր՝ որ և այն նուագեալ էր և պարգևեցաւ նմա, փառաւոր առնէր զԱստուածային պատկերին գոհացողական օրհնութեամբ հանդերձ ամենայն բազմութեամբն. որ և միաբան ասացին զամէնն մեծաւ ուրախութեամբ և երկրպագութեամբ[17] փառաւորելով զփրկական անունն Յիսուսի Քրիստոսի, և զնկարագիր պատկերն նորա: Իսկ ունէր Աբգար զսուրբ դաստառակն 'ի վերայ գլխոյ և թագին արքայական:

Օն անդր և ասաց ուրախալից բարբառով հնչեցուցանել զամենայն փողս կռածոյս[18] և զեղջերայս, զոր և Անանէ բերեալ ևս էր յարքայէն Հռոմայ. այլ և զամենայն երգարանս և զուրախարարս որպէս և օրէն էր թագաւորաց առնել 'ի մտանել և յելանելն իւրեանց յարքունական քաղաքս, և առաւել իբրև յաղթելով թշնամեացն և դառնան յաթոռ թագաւորութեան:

Օն իսկ և այնու հանդիսիւ եմուտ արքայն 'ի քաղաքն իւր պայծառացեալ աչօք և լուսափայլ երեսօք, և ողջացեալ ձեռօք, և ամբացեալ ոտիւք, բառնալով զնկարագիր պատկերն 'ի վերայ թագին և գլխոյն. զայնմ, որ եբարձ զմեղս աշխարհի 'ի վերայ սուրբ Խաչին. և այժմ բառնայ հանապազ երկրպագելով 'ի վերայ սրբոյ սեղանոյն 'ի ձեռն քահանայապետաց և քահանայից: Այլ և օն անդր անպատմելի փառաւորութեամբ[19] մտին 'ի քաղաքն, որ և էր լցեալ յամենայնէ բերկրալից ուրախութեամբ և ընկալաւ զԱնմահ փեսայն նկարագրեալ 'ի Թաշկինակ, յառագաստ իւր սուրբ, և բազմեցոյց Արքայն զսուրբն զայն նախ յարքունական գանձարանին:

15) յ2րդն պակասէր առ անչափ խնդութեանն:

16) յ3րդն չիք բարձրագոյն:

17) յ2րդ եւ յ3րդ օրինակս պակասէր և երկրպագութեամբ:

18) յ3րդն պակասէր աստ կռածոյս:

19) յ3րդն փառաւորութեամբ:

Այսպիսաց և այս երկիւղածս 'ի սպասաւորութիւն ջահիւք և խնկօք ամապատ[20] 'ի տուէ և 'ի գիշերի, պահպանեալ ոսկեղարդ վարագուրաւ: Եւ ամենայն բազմութեամն նմանապէս հաւատացեալ 'ի Քրիստոս, և երկրպագելով գնացին ջահիւք և լապտերօք, և մոմեղինօք լուցելովք, և խնդութեամբ փառաւորելով զՅիսուս Քրիստոս զՈրդին Աստուծոյ: Շնորհ ունելով և Երքայլին 'ի հասարակ գիշերոյ միաշաբաթին, և հնոց անդէն մեծաւ փառաւորութեամբ, նմանապէս առհաւատչեայ քաղաքին Եդեսիայ, մանաւանդ և ամենայն ազգի մարդկան Ճշմարիտ հաւատոյն որ 'ի Հայր և յՈրդի և 'ի սուրբ Հոգին: Եւ ասէ Անանէ՝ ով Աբգար, նման է օրս այս՝ բարեբանեալ և օրհնեալ աւուրն Գողոմեան, յորում եմուտ Տէր Յիսուս յԵրուսաղէմ, պատուեալ և մեծարեալ ոստովք կանանչացեալ ձիթենեօք և արմաւենեօք[21], և տարածմամբ հանդերձիւք (հանդերձից) 'ի ծերոց և 'ի տղայոց:

Եւ ասաց Աբգար, Ո՛ն իսկ և ես ընդ նոսին օրհնեմ զովեմ և բարեբանեմ զամենաթագաւորն Քրիստոս, և զնկարագրեալ պատկերնորա զսուրբ[22]: Եւ արդ ես յօրինող ճառիս բերից կրկնակի զնորհրդական զորս զեմաստն յօղուտ և 'ի շահ պիտանի ժառանգին իմոյ, ես և համայն հաւատացելոյ 'ի Քրիստոս: Քանզի և 'ի տասնն ամսոյն արդելոյր Խոսրովէ զգաւնն, և 'ի նոյն լուսնական ամսոյն 'ի տասն պղդելաբանն Աստուած յարգանդի կուսին, և պատկեր աւուրըն կիւրակէ: Նմանապէս և յայնմ ամսաթուի տասնեկին աւուրն կիւրակէի, նկարագրեցաւ 'ի դաստառակի. և սկսեալ անտի 'ի տասնեւերեքն գալով զՃանապարհն, և յուրբաթ աւուր յինն ժամուն ընկեցաւ 'ի ջրհորն, որպէս 'ի գերեզմանի. և 'ի տասն և չորսն շաբաթ աւուր յինն ժամուն հանեալ եղև, որպէս և յարեաւ իսկ յինն ժամուն. և 'ի մէջ գիշերի մտոյց զնա արքայն 'ի քաղաք իւր, և էր միաշաբաթ և նոր կիւրակէ: Որպէս Տէրն նմանապէս զևրն տնօրինէր, երևելով Թովմայի և մետասանիցն զրոքըն փակելովք. խոստովանելով Թովմայի «Տէր իմ և Աստուած», և Տէրն քաղցրաբանեալ առ նա ասաց, «Երանի այնոցիկ, որ անտեսաբար ինձ լինելով հաւատան»:

Արդ երանութիւնս այս 'ի վերայ Աբգարին Աբգարու և քաղաքի նորա կատարեցաւ զառաջինն. զի նախ քան զլուր բանին և 'ի ծննդեանն հաւատացեալ, և 'ի ձեռն մորուցն ընծայեալ արժանաւորեցաւ Քրիստոսական հաւատոյն, որ 'ի Հայր և յՈրդի[23] և 'ի սուրբ Հոգին: Եւ առ վաղեւն միաշաբաթին և զատկին երկրորդի մինչև յերրորդումն կիւրակէին փրկագործ և առաջին զատկի Յարութեանն Քրիստոսի, յորում և փրկեցան ամենայն ազգածք, որ երեւին և որ ոչն երեւին, մեծարեաց Աբգար զամենայն բնակիչս քաղաքին, զարս և զկանայս, զանազան խորտիկս պատրաստելով օր աւուր, և ծաղկահոտ գինիս[24], և այլ օգտակար և պիտանի ըմպելիս՝ որք ոչ կարմէին գտնի, զաւուրս ը. (ութն) նաւակատիս առնելով Քրիստոսանման նկարագրեալ նորայն պատկերի, 'ի փառս և 'ի գովեստ ամենասուրբ Երրորդութեան[25] Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն:

20) յ3րդն պակասէր ամապատ:

21) յ2րդ եւ յ3րդ օրին, պակասէր արմաւենեօք:

22) յ3րդն պակասէր զսուրբ:

23) ի գաղափարին եւ յ3րդ օրին. պակասէր և յՈրդին:

24) յ2րդն պակասէր աստի և այլ օգտակար և պիտանի ըմպելիս, որք ոչ կարմէին գտնին:

25) յ2րդն պակասէր ամենասուրբ Երրորդութեան:

Եւ օն անդր[26] սահմանեաց միաւոր ընդ նորուն կիւրակէին և Յայտնութեանն Քրիստոսի, և զսուրբ նկարեալ պատկերին զգալուստն տօնել փառաւորապէս 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր, զոր և Հայք դաստառակ անուանեն, և Յոյնք Մանտիլ, և Եբրայեցիք Թաշկինակ. [27] և Հռոմայեցիք Նաֆ. և ամենայն 'ի փառս և 'ի պատիւ անուանն Քրիստոսի:

Այլ և ընկալեալ սուրբ Առաքելոյն Թադէոս զամենասուրբ Հոգին Աստուած 'ի վերնատանն, և եկեալ 'ի վիճակն իւր սեփական 'ի քաղաքն Ուռհայ, զանխլաբար մնանելով[28] անդ և Հոգւոյն սրբոյ առաջնորդութեամբ 'ի տանն Տուբիայ, և հա ողջոյն. և նոցա[29] ընկալեալ, և խօսեցաւ նոցա զբանն Կենաց. և խնկոյն հաւատաց Տուբիա և ամենայն տունն իւր: և մկրտեցան 'ի մահն Քրիստոսի անուամբ սուրբ Երրորդութեան. բժշկելով ևս յամենայն ցաւոց իւրեանց: Բուժեաց և զԱբգարոս որդի Արշեայ. և եհաս համբաւ իրացն գործելոց յարքունիս. և հրամայեաց արքայն Անանէի և տանն արանց գնալ և տեսանել, թէ՝ կարասցեն ևս ճանաչել. և նոքա փութանակի առ հրամանն եկեալ տեսին և ընթացեալ[30] պատմեցին Արքային, խնդալէս և 'ի գլխաւորացն է այլն այն աշակերտաց՝ մի յերկոտասանիցն:

Եւ առաքեաց զնոյն Անանէ և յայլ ևս մեծամեծ աւագանւոյն մեծաւ փառաւորութեամբ կոչել յարքունիս: Եւ տեսեալ Արքային զառաքեալն Քրիստոսի՝ զի զայր, և լոյս Աստուածայլին ճառագայթեալ փայլէր 'ի սուրբ երեսաց նորա, և շնորհք երկնային հոսանի ունէր 'ի վերայ նորա. և ընթացեալ առ ոտս նորա՝ արձակելով զօրէնս Թագաւորաց, և խոնարհեալ սուրբ առաքելոյն կանգնեաց զնա և համբուրեաց. և ինքն Արքայն առեալ զԱջն Առաքելական համբուրէր՝ աչացն և երեսացն 'ի վերայ դնելով:

Օն անդր[31] և փառօք 'ի փառս բազմեալ հանդուցանէր 'ի գահոյս արքունական. և ինքն որպէս ծառայ նստաւ առ ոտս նորա, և ամենայն մեծամեծ աւագանին՝ ձեռս 'ի կապ և յոտն կալով, լսէին զբանն կենաց Աւետարանական քարոզութեանն: և անդէն հաւատացեալ թագաւորն և ամենայն տունն իւր, մկրտեցան յանուն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն:

Օն խոկ[32] եղեալ յաւազանէն ողջանդամ ըստ հոգւոյ և մարմնոյ, նմանապէս և ամենայն բազմութիւն քաղաքին, և որք ունէին ցաւս, առհասարակ բժշկեցան ամենեքեան. և հաղորդեալ զնոսա մարմնոյ և արեան Տեառն, զկեաց և կանոնս առաքելականս, կալ և մնալ հաստատուն 'ի հաւատս Քրիստոսի:

Եւ ըստ օրինադրեալ կանոնի քաղաքավարիկ բարեկարգութեամբ, սիրով և ողորմածութեամբ՝ որ առ Աստուած և առ արքայս և առ իշխանս: Հիմնադրեաց Աջոյն իւրով և սրբոց շինել Եկեղեցի 'ի վերայ առաքելական վեմի Անուամբն Քրիստոսի, թողլով անդ յիւրոց աշակերտացն: Եւ էր ուրախութիւն մեծ և բազում[33] յարքունիս, և յամենայն քաղաքն, և նաւակատիք զաւուրս Բ. ուրախանալով հոգևորք

26) յ2րդն պակասէր օն անդր:

27) Ի գաղափ. եւ յ3րդ օրին. աստ յաւելուլն օն խոկ:

28) յ3րդն էր մնանել:

29) ի գաղափ. եւ յ3րդն Նոցա:

30) յ2րդն Եկեալ.

31) յ3րդն չիք օն անդր:

32) յ2րդն չիք օն խոկ

33) յ2րդն պակասէր և բազում:

և մարմնականօք, որպէս և յիջանել սուրբ Հոգւոյն[34], խիկայէս և անդ. սկսեալ յարքայէն մինչև ցաղքատս, ամենայն ինչ քաղաքացւոյն և նորահաւատիցն 'ի Քրիստոս, հասարակաց էր. և ոչ ոք իշխէր ասել զընչից իւրոց՝ թէ իւր իցէ:

(Մնացորդն ի յաջորդ թերթիս):

ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ԶՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԷ

ՀՈՌՈՄՈՍԻՆ ՎԱՆԱՑ Ի ՇԻՐԱԿ:

Որչափ ինչ 'ի նախնի պատմագրաց ազգիս ժամանակակցաց շինութեան այսր վանից ունիմք բանս վկայութեան յաղագս հաստատութեան վանաց Հոռոմոսին բովանդակեալ 'ի հին Հայաստանի անուանեալ մասինն 'ի գաւառն Շիրակ Այրարատեան նահանգին, զայն ամենայն և որ այլոքդ յետ առ պատմագիրս մեր իւրեանց գրուածք առ այս նիւթ, բովանդակ 'ի մէջ առնումք իբրև նախադիտելիք պատմութեան վանաց Հոռոմոսի:

Իսկ որ ինչ նէրկոյ դրից նորա ակնագրութիւնք ցոյց փոքր մնացելոցն 'ի հազարամեան հնոց ժամանակաց առ 'ի նախնեաց մերոց վայելք սրբութեան փառացն Աստուծոյ և խորան երկնաւորին 'ի յերկրի հաստատեալ, անմահ վկայք բարեպաշտութեան և առ Աստուած սիրոյն հոգեկան եռանդեան նոցա 'ի մերում ակնութեան հանդերձ թուականօք շինութեանցն և այլ արձանագրութեամբք 'ի յետոյ յաղագս որ առնեմ շինութեան հոյակապ տաճարին և ժամատանն 'ի մեծասքանչելի վայրս 'ի Յովհաննու Շահնշահէ՝ որդւոյ Գագկայ Շահնշահի 'ի թուին Հայոց ՆՁԷ (յամի 1038), զայն ամենայն ընդարձակ ունիմք կարդալ ըստ ձեռնհասութեան մերում 'ի սոյնպիսի զայս հանդերձ հեռահետ փոփոխութեամբք յԱռաջնորդացն ձեռս:

Յիշատակեալ է մեր յառաջին պատմութեան մենաստանին Հաւուծոյ միումն 'ի հաւչակաւոր վանաց Շիրակայ՝ երես 11. պահպանութիւն Հոռոմոսին վանաց 'ի բնակարան հալածելոցն կրօնաւորաց 'ի Ռոմանոս Կայսերէ Յունաց յաւուրս Աբասայ արքայի 'ի տանուտերն զայոց, որ և զանուն ընկալաւ 'ի նոցունց կրօնաւորաց վասն կոչելոյ նոցա Հոռոմոց Եկեղեցւոյ. ըստ որում նոքա զի «'ի Հոռոմոց եկին կողմանց» ըստ Վարդանայ, կոչեցին և զվանքն Հոռոմոսին վանք:

Իսկ թէև Ասողիկ ասէ զշինութիւն վանացն ուրումն Յովհաննու, զորմէ և գրէ յասելն, «Իսկ 'ի գաւառին Շիրակայ Հոռոմոսին կոչեցեալ վանք՝ շինեցաւ 'ի ձեռն Յովհաննիսի որ էր զարդարեալ յամենայն առաքինութիւնս ևս առաւել յողորմածութեան զարդս . . . . և անյաւուրաց և ճանապարհորդաց հանգստարան պատրաստէր զանեղին, մինչև հանդէսն իբր յիւրեանց տան՝ ամենայն ստացաց, որ մինչև ցայսօր երևի նոյն նշան ողորմածութեան, 'ի սոյն յայնմ», Այլ պարտ է համարել զայս հաստատութիւն մենաստանին 'ի Հոռոմոսին վանս 'ի ձեռն կրօնաւորացն, զոր բաց 'ի պատմագրացն վկայելոյ, որպէս Կիրակոսն է պատմիչ, և Վարդան մեր աշխարհագիր դասնեմք և զթուական յարձանագիրս և յորմունս տաճարին բազմօք յառաջ քան

34) Յ2-րդն չէք ասսի գլխոյն խոսեալ և անդ . . . թէ իւր իցէ:

զգալին մեստասաներորդ, զոր և յառաջ բերեալ ունիմք ըստ կարգի. Թող զի և ժամանակք Թագաւորութեանցն Ռոմանոսի և միւս Աբասայ, հաստատեն զայս աներկբայ կարծիս։

Արդ՝ եթէ Հոռոմոսին վանք լեալ է ՚ի շինութեան ՚ի զալստեան անդր հոռոմ կրօնաւորացն յաւուրս Թագաւորութեան Աբասայ յերեսաց հալածանաց Ռոմանոսի Կայսեր, վկայէ Ասողիկս պատմիչ յասելն, «Հաստատեցին վանս հալածեալ կրօնաւորացն ՚ի Ռոմանոս Կայսերէ զՀոռոմոսին կոչեցեալ և զդպրեվանք ՚ի Շիրակ գաւառին»։ ուր հաստատեցին ամենայն՝ զընակութիւն կրօնաւորացն ցուցանէ և հաստատութիւն միաբանական ուխտի անդր, յորոց և անուն վանացն մակադրութեամբ երևի կոչեցեալ Հոռոմոսին վանք։

Զի ոչ միայն զայս հաւաստիս քաղեմք ՚ի բանից սորին Գանձակեցւոյն, յորմէ և իմանամք զշինութիւն վանացն յառաջագոյն եղեալ քան զկրօնաւորացն գալուստ, այլ և Նորեկն իսկ Ստեփաննոս ցուցանէ ՚ի վերոյ գրեալ բանս իւր զշինութիւն վանաց Հոռոմոսին ՚ի Յովհաննիսէ, զոր և ՚ի վեր քան զայս յօդուած՝ ՚ի նմին Խորդ գլուխ գրոց պատմութեան իւրոյ ցուցանէ լինել նոյն հայր Յովհաննէս՝ որ Առաջնորդն էկաց մեծահռչակ ուխտին Կամրջաձորոյ, և որ հալածեալն էր յարևմտեայ աշխարհէն, յԵկեղեացւոց գաւառէն, որպէս ասէ, «Նախ առաջին մեծահռչակ ուխտն կամրջաձորոյ ՚ի գաւառին Արշարունեաց[1]. որոց Առաջնորդ հայր Յովհաննէս, որ հալածեալ յարևմտեայ աշխարհէն, յԵկեղեացւոց գաւառէն ՚ի քաղկեդոնական մոլորութեան աղանդոյն . . . ։ Արդ եկեալ բնակեցաւ յառաջասացեալ տեղին Կամրջաձոր, կանոն կարգի ունելով զառաքինութիւն սրբոյն Բարսղի . . . Թէ էր նոցա ամենայն ինչ հասարակաց. յոր ժողովեալ աւք ճգնազգեացք Թըւով 300 . . ։ Յետ որոյ, ասէ, «Իսկ ՚ի գաւառին Շիրակայ Հոռոմոսին վանք շինեցաւ ՚ի Յովհաննիսէ որ էր զարդարեալ ամենայն առաքինութեամբ . . ։ երես 159—160։

Զուգելով քան զայս ՚ի գիրս պատմագրաց ազգիս վկայութիւն հաւաստի ՚ի ցոյց հաստատութեան խնդրոյս, հաւանական համարիմք մեք մի և նոյն լինել Յովհաննէս հայրն, որ Առաջնորդն էկաց Կամրջաձորոյ վանաց յԱրշարունիս, և որ յետոյ զՀոռոմոսին շինեաց վանս ՚ի Շիրակ. զի և ամք ժամանակաց Թագաւորութեան Ռոմանոս Կայսեր Յունաց և միւսոյ Աբասայ որդւոյ Սմբատայ՝ ՚ի մի և նոյն միջոցս հայեն հալածանաց կրօնաւորացն յԱրևմտից ՚ի Հայս։

Իսկ զի ՚ի Թուականին Հայոց յԿԵ. (916) Թագաւորեալ Յունաց Ռոմանոս Կայսր, յերկոտասաներորդում ամի Թագաւորութեան նորա յաջորդէ զԹագաւորութիւնն

1) Կամրջաձոր, մեծահռչակ ուխտ միաբանակեցաց պայծառանայր յաւուրս Անանիա Կաթուղիկոսի, զոր Ասողիկն դնէ ըստ բանիս ըստ այսմիկ յԱրշարունիս. Վարդան ասէ լինել ի Շիրակ յԱշխարհագրութեան իւրում, «Շիրակ գաւառն, ասէ, ուր կան սուրբ ուխտքն Հոռոմոս, եւ Մարմարաշէն, եւ Կամրջաձոր. Դպրեվանք եւ Հառիճոյ»։

Զայս անհամաձայնութիւն մերոց պատմագրաց Թէ եւ հին Հայաստան երես 400, վրիպակ համարի գրչաց եւ հետեւաբար զԿամրջաձոր դնէ յԱրշարունեաց գաւառի, բայց ցայս վայր չգիտեմք տակաւին եթէ գուցէ յԱրշարունիս վանք մնացեալ ի վաղ ժամանակաց քան զբազմաթիւ վանորայսն ի Շիրակ. այլ միայն զԿամրջաձոր գիտեմք զտեղին մերձ յԵրուանդակերտ, ուր ի խորաձորին Երասխայ նշմարին յեզերսն հիմունք կամրջին ի հնոց ժամանակէն։

Աշոտոյ՝ Աբաս եղբայր նորա՝ որդի Սմբատայ, այն է 'ի թուին Հայոց ՅՀԹ. (930). և զի վարեաց սա զթագաւորութիւնն զամս քսան և չորս, յայսմ իսկ ժամանակի երևի լեալ հալածումն կրօնաւորաց յարևմտից, որպէս ասէ Ասողիկ, հաւաստի վկայն յերեսաց քաղկեդոնական մարդադաւան աղանդոյն:

Այլ թէ որքա՞ն միջոցք ժամանակաց իցեն անցեալ ընդ մէջ Հայր Յովհաննու և գաղթեան կրօնաւորացն 'ի Հայս, յորոց աւուրս յիշատակի լեալ հաստատութեան մենաստանին Հոռոմոսի, ոչ յիշատակէ Ասողիկ զամս շինութեան վանացն 'ի Յովհաննիսէ, և զկրօնաւորացն գաղթեան. ուստի այսպիսի յայտնութիւն ժամանակաց պարտիմք իմանալ 'ի միջոցի քսանևչորս ամաց իշխանութեան Աբասայ յետ երկոտասան ամաց թագաւորելոյն Ռոմանոսի 'ի վերայ Յունաց:

Ի տեղեկութեանց աստի կարեմք հաւաստի յառաջ բերել, եթէ 'ի կրօնաւորացն հալածելոց 'ի Ռոմանոսէ, որք հաստատեցին բնակութիւն 'ի վանորայս Հայոց 'ի Շիրակ, էր և Հայր Յովհաննէս, որ թէ և շինողն կոչի յԱսողկայ Հոռոմոսին վանաց 'ի թուին Հայոց ՅԿ., այլ Կիրակոս ընդհանրապէս խօսի զհաստատութենէ վանացն 'ի ձեռն կրօնաւորացն. զի կոչումն իսկ վանացն յանուն նոցին կրօնաւորաց հասելոց անդր, ցուցանէ եթէ յառաջագոյն իսկ կայր վանքն և յատուկ զնմին կրէր անուն, յորոց ապացուցութիւն ահա ունիմք յարձանագրութեանց նոյն իսկ Հոռոմոսին վանաց թիւ ժամանակի յութերորդ դարու:

Զի Հոռոմոսին վանքն ասացեալ է տաճար քառակուսի իբրև ժամատուն ըստ վաղնջական ձևոյ ժամատանց Եկեղեցեացն Հայոց, որ այլ է յեկեղեցւոյ Հոռոմոսին սուրբ Յովհաննէս անուամբ կառուցելոյ 'ի Յովհաննու Շահնշահէ որդւոյ Գագկայ շահնշահի 'ի թուին Հայոց ՆՁԷ (1038) առանց զմբէթի միով լուսամուտիւ 'ի տանիս, բոլորշի ամբարձեալ իբրև զժամատունն վանաց Հոռոմոսի, և կարի հնագոյն քան զայլ տաճարս Հոռոմոսին, 'ի վերայ հարաւային սեան առաջին դասու 'ի վերնախարսխի այնորիկ ունի զթիւ հայկական ՄԽ. որ երևի թիւ շինութեանն, որով և մարթէ զշինութիւն Հոռոմոսին վանաց հանել յութերորդ դար քրիստոնէութեանս մերոյ, և հաստատել ըստ բանի պատմագրաց թէ՝ կրօնաւորքն հալածեալք 'ի Հոռոմոց յաւուրս Ռոմանոսի Կայսեր 'ի Հայս, նորոգեցին զայն և ոչ նորոգ կանգնեցին զմենաստանն, ըստ որում և կոչեցաւ յանուն նոցա՝ Հոռոմոսին վանք:

Այլ թէ այս տաճար քառակուսի Հոռոմոսին կոչեցեալ յի՞նչ անուն կոչէր նախքան զհաստատութիւն 'ի բնակարան փախուցելոցն կրօնաւորաց, ոչ ինչ յիշատակեն պատմագիրք, և ոչ իսկ յարձանագրաց նշմարին հետք յիշատակաց 'ի վերագրեալ ՄԽ. թուականէ Հայոց մինչև ց'ՆԺԷ. թիւ Հայոց. յորում Սարգիս ձեռն Հայր լեալ Հոռոմոսին վանաց վանականն ասացեալ՝ յիշատակի 'ի ժողովին դաւանագրութեան Վահան Կաթողիկոսի, զորմէ Ասողիկ յԼ.րդ գլուխ Գ. գրոց, ո՛չ գտանեմք առ նոսա զայլ ինչ զշինութենէ կամ զհաստատութենէ մենաստանին 'ի յառաջեւութեան, կամ եթէ 'ի միջոցի հարիւր և չորից ամաց ո՞ք ոմանք եղեն առաջնորդք անդ, կամ ո՞վ եղև շինող վանաց 'ի նմին թուականի, և պահեցաւ հաստատութիւն մենաստանին շարունակութեամբ վանահարց մինչև ց Սարգիս ձեռն: (Շահխաթունեան):

ՏԱՂ,

ՎԱՍՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԱՅ ՆՈՒԻՐԱԿՆԵՐՈՒ ԳԼԽԱՏՄԱՆՆ:

Ինըն հարիւր հայոց թվական
ԾԵ. (յիսուն՝ հինգ) թիւ աւելեան,
Յէջմիածնէն նուիրակք եկան,
Բոլոր աշխարհըս հոռոմոց տան:
Յորում՝ մեռոն կայ ընդ իւրեան.
Մեծ նամակով և օրհնութեամբ,
Եկեալ հասին բիւզանդիան,
Որ է Ստամպօլ՝ սրբոց կայան:
Ով որ տեսաւ զնոսա լըման,
Իբր զհրեշտակ ընդունեցան.
Մեծն Յօհաննէս՝ սրբոց նըման,
Եպիսկոպոս ազնուական:
Վանք 'ւ մենաստանք ուրախացան,
Յորժամ տեսին ըզերեսեան,
Զտէր Սարգիս եպիսկոպոսն,
Եւ զԴաւիթ կոյս աբեղայն:
Անուանք նոցա համբաւեցան,
Սուրբ օրհնութիւնք որ կարդացւան,
Եկեղեցիք բերկրեալք ցնծան,
Եւ ժողովուրդս որ օրհնեցան:
Շրջեցին զքաղաքս լըման.
Եւ նաւեցին 'քաղաք Կաֆայն.
Կաֆայեցիք խիստ ցնծացան,
Իբր զառաքեալն տէրունական:
Եկեալ գնացին Ղարապօղտան,
Սէհով քաղաք քրիստոնեայք կան.
Ամենն տեսին ուրախացան,
Մինչ 'ի պարոն և ոյթելնայն:
Սէջովացիք զնոսա տեսան,
Խիստ պատուեցին և օրհնեցան.
Իլով քաղաքն յուղարկեցին,
Հայ քրիստոնեայք որ 'ի հոն կան:
Իլովացիքն երբոր տեսան,
Զանց պատուեցին սրբոց նման,
Զինչ սուրբ Գրիգոր պետապարթեւեան,
Լուսաւորչին Թոռանց նման:
Ցընծան նոքա 'ի ժողովն այն,
Շուրջառք և զգեստք խիստ պատուական,
Իլով քաղքէն առին ելան,
Դարձեալ եկին 'ի Ակքերման:
Երբոր հասան 'ի Ակքերման,
Խիստ խնդութեամբ բերկրեալ ցծան.
Անտի նաւեալ եկան հասան,
Որ է Պօլիս Կոստանդիան:
Զիւրեւր եկին մեզ աննման,
Զինչ զհրեշտակք Աբրահամեան.
Ոնց Ստամպօլցիք զնոսա տեսան,
Տեառն Աստուծոյ շատ գոհացան:
Անդ ժողովուրդք ժողովեցան,
Եւ ասացին ամենքեան,
Թէ մի երթայք դուք միաբան՝
Կաթողիկոսն եղեալ վախճան:
Յայնժամ նստեալ և խորհեցան;
ԶԴաւիթ ղրկեն 'ի տեսութեան.
Ոնց որ հասաւ յԱմասիան,
Լուք մատնեցին զինքն 'ի յատեան:
Անդ անօրէնք ժողովեցան,
Որդիքըն նենգ և կորստեան,
Պիղծ Յուդայի եղեն նման,
Որ մատնեցին զՏէրն 'ի յատեան:
Ցասմամբ եկեալ զԴաւիթ տարան,
Պարոն որդոյն դուռն 'ի ախլան[1],
Ասին չաշուտ[2] են միաբան,
Սոփին[3] զրկել 'ի Ֆրանկիստան:
Եդին 'ի բանտ և 'ի զընտան[4],
Զինքն մատնեցին 'ի ըշկէնճան[5],
Զխեղճ մարմինն 'ի տաքացան,
Ի չարչարանքըն մաշեցան:

---

1) Աղէտն կամ պատուհասն: — 2) Լրտես. — 3) Իմաստուն կամ օրէնսգէտ. — 4) Զնդան կամ բանտարկէնք: — 5) Տանջանք:

Անտի տուեալ 'ի զօրական,
Վզին 'ի զինճիլ[1] ձեռն 'ի կիլապչան[2],
զԴաւիթ բերին 'ի մեծ տիվան,
Տարին ձգեցին զախուռճոյն[3] օտան[4]:
Լուք զախուչէքն ամենեքեան,
Ի ձի հեծեալ վանքըն հասան.
Երբ նուիրակքն զնոսա տեսան,
Զահի հարեալ զերդ զուռ դողան:
Եկեալ տարան զնոսա լըման,
Ի մեծ վէզիրն[5] այլ փաշան,
Յայնժամ տեսեալ ըզերրորդեան,
Ասէ՝ բերէք վաղն 'ի տիվան:
Բերին զինքեանք վաղն 'ի տիւան,
Հաւսար նստան երեք փաշան[6],
Հարցաքննեն զամենեսեան,
Սուչ[7] մի գտնուն նոցա վերան:
Անտի ելեալ խոնտքար[8] մըտան,
Նա էր տացեալ զիժար հրաման,
Ասայ ձգեցէ՛ք զախուռճոյն օտան,
Մէկ քանի օր տան ըսկէնձան:
Նոքա ելեալ ամենեքեան,
Ի խոնտքարէն առեալ հրաման.
Լուք կացուցին այլ մի տիվան,
Ըմբռնեցին առեալ տարան:
Սուրբ Յովհաննու պէս բանտատարան
Զինչ Քրիստոսի օրն ըմբռման.
Ի չարչարանքըն զանազան,
Աւել աւուրս հնգետասան:
Օրն էր շաբաթ սուրբ կատարման,
Նահատակացն երրորդեան,
Գլխատեցին զամենեսեան,
Լոյս կիրակի օր յարութեան:
Յովհաննու պէս գլխատեցան,
Կամ Յակոբու առաքելեան.

1) Շղթայ: — 2) [illegible] կամ [illegible]: — 3) [illegible]: — 4) Սենեակ: — 5) Նախարար կամ մեծ եպարքոս: — 6) Բդեշխ. — 7) Յանցանք: — 8) Իշխան է մեծաց [illegible] կամ [illegible]:

Որ է մարմինն՝ ի սպանման,
Զաւուրս երրորդ անթաղ մընան:
Սրբոց մարմինքն որ հոն կեցան,
Ոչ յերեսներն թարշամեցան,
Լոյսն էր իջեալ աստղանըման,
Զայն լոյս տեսեալ շատ մըսըլման[1],
Յետոյ գնացեալ Լըմին խօձան[2],
Մօտ մեծ վէզիրն Ալի փաշան,
Իբր զՅովսէփ արեմաթեան,
Խնդրեց զմարմինն տէրունական:
Նա էր տուեալ աղէկ հրաման,
Գնա թաղէ զամենեսեան,
Զամէն ատլթն[3] արէք լըման,
Զ ինչ ձեր օրէնքըն տայ հրաման:
Իսկ վարդապետք ժողովեցան,
Եպիսկոպոսք հաւաքեցան,
Եւ կրօնաւորք շատ միաբան,
Սրբոց թաղումն գումարեցան:
Երկնցանէք լիխտ զանազան,
Մեծ ու կըտսեր աշխարհական,
Ի հոն հասին ամենքեննեան,
Եւ սուրբ թաղմանն արժանացան:
Բամիւ կանթեղին կարգ կատարման
Եւ կատարեն զամէնն լըման,
Պատնեն զմարմինքն միաբան,
Եւ սահմանեն 'ի մի տապան:
Կանթեղք բազում ժողովեցան,
Լալականներ ոսկեզգական,
Շատ լացուցին զամենեսեան,
Մինչ սար ու ձոր 'ի լաց ելան:
Երեք մանկանց սրբոց նման,
Երեքն մի տապան եղան,
Արժանացան սուրբ հանգըստեան,
Դուք այլ կացէք ուրախութեամբ:
Բամիւ զամէնքդ միաբան,
Զձեզ աղաչեմ զամենեսեան,

1) Հագարացի կամ Մահմետական: — 2) Տէր կամ [illegible]: — 3) [illegible]:

Նա Յովհաննէս անարժան,
Եմ քահանայ գործովս ունայն:
Նուիրեցի օր կատարման,
Սակաւ բաներս որ գրեցան,
Ով որ տայ զհայր մեղայն,
Յիշեալ լիցի յարքայութեան:
Այս գործեցաւ 'ի մեծ թվական,
Ինն հարիւր թիւն էր լրման,
Ծ.Ե. թիւ յաւելեան,
Հոկտեմբերի եօթնեւտասնեան:

Օ՛հ, եղբարք աղաչեմ զամենեսեան, ով ընթերցողք տեսողք սրբազան, Թագաւորութիւն[1] ջանէք. Երրորդիչն Աստուած օրհնէ զձեզ. անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր:

ԱԶԳԱՅԻՆ

ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑ ՀԱՌԻՃՈՅ ՎԱՆՈՒՑ

Ի ՇԻՐԱԿ

Եթէ իւրաքանչիւր մտածող եւ բարեմիտ Հային ցանկալի է իւր ազգի մանկտեաց ապագայ բարօրութիւնը, եթէ նրանցից մի քանիսի եւ մանաւանդ մեր Հոգեւոր Ծայրագոյն իշխանութեան յատուկ փափագն է եղած այդ բարօրութեան իսկական տարրը մտցնելու համար ուսումնարաններ ունենալ, եւ եթէ այդ գովելի իղձերու եւ ցանկութեանց կարեւոր յաջողութիւնը օրինաւորելու համար. շատ ձեռքերի արդիւնաւոր կարկառմանը զգացուել է կարօտութիւն, ուրեմն Հառիճոյ մենաստանը եւ անդ գտնուած Հոգեւոր դպրոցը մասամբ մի մեր ժողովրդի ծղտմանը եւ կարեւոր արդիւնաւոր ծառայութիւն ցոյց տուած է: — Այս հռչակաւոր մենաստանի նախնի եւ արդեան վիճակներու մասին մանրապատում տեսութեամբ մի ընթերցասիրաց հետաքրքրական կարօտութիւնը բառնալու պարտքը կը թողնում ժամանակի խնամոցը, այժմս անձեռնահաս լինելուս պատճառաւ. միայն այսքանս ասելու անհրաժեշտ պարտք կը համարիմ, որ նոյն մենաստանի մահամերձ դրութեանը օժանդակելու ասպարէզ եկաւ սրանից քանի տարի յառաջ քանի մի Աղէքսանդրապօլցի երիտասարդաց խումբ, եւ ընկերական ճշմարիտ սիրով կապուած իւրեանց համգամանքեալ դրամական եւ այլ նիւթական զոհագործութիւններով շուքը եւ կենդանացուցին պատկերը վերադարձրին իրան: Այսպէս բոլոր վտանգը վանքից հեռացնելուց յետոյ այդ անձնանուէր ընկերութիւնը ուսման ճաշակը առած լինելով, ահա համարեա երեքտասաներորդ տարի է որ հիմնած է այնտեղ ուսումնարան եւ հետեւաբար նրա հետ կից մի հոյակապ ննջարան աշակերտաց համար նրա մէջ արժանաւոր եկեղեցականք պատրաստելոյ նպատակաւ, իւրաքանչիւր տարի հոգալով ուսումնարանի բոլոր պիտոյքը: Այս նպատակի ամենակարեւորութիւնը եւ մեր այժմեան դրութեան մեծ յարմարութիւն ունենալը յուսամ որ իւրաքանչիւր բարեմիտ Հայ խոստովանի: Բայց ափսո՛ս որ փոքրահոգւ ընկերութեան բարենպատակ ձգտմանց եւ ձեռնարկութեանց օժանդակութիւն ցոյց տալոյն անտեղի հրաժեշտներ կը վայելէր մեր նորակառոյց հոգեւոր Դպրոցը ոչ միայն ուսման ճաշակն չառնող մի հասարակութեան կողմից, այլ եւ հոգեւոր իշխանութեան եւ նոյն վանքում գտնուած քանի մի անբարեմիտ պաշտօնեաների կողմից շինել եւ քանդել, կարգադրել եւ խանգարել, խրախուսել եւ հալածել, ողորմելի աշակերտաց. այս էր ահա մի ժամանակեայ ընկերութեան եւ վանահօր փոխադարձական սխրագործութեան ցաւալի պատկերը. Թողում ասել եւ այլ այն յարգելի խոչնդոտներն, որոնք անակնունելի խոչնդոտներու հետ ի միասին թեւ թեւի տուած բարեպաշտօն ընկերութեան առաջն էին գալիս իւրաքանչիւր օր եւ իւրաքանչիւր տարի. որով նոյն ամենայն մէկ բարի եւ արդիւնաւոր գործառնութիւնը առ ժամանակեայ դադարումն եւ սառնութիւն կը ստանար: Այս ամէն խոչնդոտներուն եւ անտեղի վշտաց դէմ հսկայաբար կը դիմանար Հառիճոյ ընկերութիւնը եւ միշտ կը յուսար որ երբ եւ իցէ իւր Դպրոցի բաղտն էլ կը փայլի ողորմութեամբն Աստուծոյ. անհետացան այն ցաւալի միջոցները ժամանակի անյատակ եւ անդառնալի հեղեղների մէջ, եւ ընկերութեան նորաբողբոջ ուսումնարանը շնորհիւ իւր բարեպաշտօն հիմնադրաց տոկալով այն ամէն մրրիկների ուժին, կարողացաւ մի քանի արժանաւոր պտուղներ շնորհել իւր սաներուց. սրանցից մի քանիսն կը շարունակեն գեղերի մէջ արժանաւոր սրբազնագործութեան պաշտօնն լրացնելով ըստ ամենայնի

1) Պահպանութիւն:

իւրեանց խակական պարտքը իբրեւ հաւատարիմ ծառայ ազգի եւ եկեղեցւոյ. եւ մի քանիսն առանց այդ կոչման, ուսուցչական պարտաւորութիւն կը կրեն նոյնպէս գիւղերի մէջ ուր որ աւելի կարօտութիւն կը զգացուի: Մի քանի տարի յառաջ վանահօր կողմից ունեցած խոչնդոտներն բառնալու եւ նրանց էլ իրանց գործակից անելու համար ծայրագոյն իշխանութեան բարեհաճութեամբ ընկերութիւնը ստացաւ իրաւունք միացնել ուսումնարանի եւ վանուց վարչութիւնները իրանց եւ վանահօր թեւի տակ, եւ այնպէս հոգալ փոխադարձաբար նոցա, այսինքն վանքի եւ Դպրոցի պէտքը: Այնուհետեւ ընկերութիւնը կը յուսար երկուստեք պաշտպանութիւն ունենալ թէ հասարակութեան եւ թէ իշխանութեան կողմից. եւ փառք Աստուծոյ մինչ մեր նախահայրապետի գահը ընկալաւ Վեհափառն Գէորգ Դ. Աստուածընտիր Կաթուղիկոսը, կարծես մի նոր կենդանութեան նշան ստացաւ ոչ միայն Հառիճոյ Հոգեւոր Դպրոցը, այլ եւ ամեն մէկ հալածեալ ազգային Դպրոց: Չէ կարելի ուրանալ արդարեւ, որ Գէորգ Վեհափառի Հայրապետութիւնը պիտի անմահանայ այս Դպրոցների բարեկարգութեամբ եւ առհասարակ մեր թմրած ժողովուրդին մի արթնացուցիչ շարժումն տալով կը յուսայ Հառիճոյ ընկերութիւնն էլ, որ պիտի վերակենդանանայ իւր դպրոցը եւ պիտի մխիթարէ ոչ միայն իւր սիրտը, այլ եւ բոլոր մերազնէից, թէ ստանայ իշխանական պաշտպանութիւն Ծայրագոյն Հայրապետի եւ այլոց իշխանաւորաց կողմից: Որովհետեւ Վեհափառ Հայրապետն արդէն ուշադրութիւն դարձրած է վանական դպրոցներն բարեկարգելու եւ մանաւանդ Հառիճոյն, ինչպէս այս տարի օդափոխութեան պատճառաւ այցելութեան շնորհ սփռելոյ ժամանակն անձամբ քաջալերեց ընկերութիւնն եւ Հայրապետական Սուրբ օրհնութեամբ սրտապնդելով նոցա յուսաբեկեալ դրութիւնը ծայրագոյն պատուիրեց ի միջի այլոց առանձին ուշադրութիւն դարձնել ուսումնարանի յառաջադիմութեան համար. եւ որովհետեւ Նորին Սրբազնասուրբ օծութեան յատուկ ցանկութիւնն է արժանաւոր եկեղեցականք պատրաստել տալ այդ Դպրոցներում, վասնորոյ բարեպաշտօն ընկերութեան վաղեմնի նպատակն Վեհափառի վսեմ նպատակին շատ մօտիկ կը համարուի եւ բոլորովին նման է. ուստի սխալուած չէ եղած նա, Վեհափառ Հօր եւ հետեւաբար նորա հօտի ցանկութեան եւ ձգտմանց համաձայն արդէն հոյակապ Դպրոց մի իւր ննջարաններով եւ ամենայն պիտոյիւք առանձին կանոնադրութիւններով եւ արտօնութեամբ պատրաստած լինելով. կը մնայ որ Ա[illegible] բարեհաճ հռչակ Խմբագրութիւնդ բարեհաճի յայտնել ցանկացող համազգայնոց Հառիճոյ Դպրոցական վարչութեան կողմից աշակերտ ընդունելու համար հետեւեալ պայմաններն: Առաջին), Հառիճոյ Հոգեւոր Դպրոցը մտնելու ցանկացողներն պարտական են լցուցանել մի առ մի Վանական Դպրոցաց ընդհանուր կանոնադրութեան բոլոր պայմանները: Երկրորդ), նոքա պարտական են լցուցանել Հառիճոյ Հոգեւոր Դպրոցի կանոնադրութեան պայմաններն եւս. որոնք ըստ մեծի մասին համաձայն են ընդհանուր կանոնաց եւ սահմանուած տեղի հանգամանաց յարմարութեան համար: Երրորդ), նոքա պարտական են մնալու այն Դպրոցում ամբողջ տարի եւ հետեւաբար մինչ ցաւարտ ուսման. նոքա կարող են երկամսեայ կամ մի ամսեայ արձակուրդ ստանալ առանձին հրամանաւ հոգաբարձուաց եւ վերատեսչի Դպրոցին, իւրեանց հայրենիք այցելու. միւս միջոցներում ծնողք չունին իրաւունք առանց յարգի պատճառի հեռացնել իւրեանց զաւակաց Դպրոցից մինչ ցաւարտ ուսման. եւ Չորրորդ), նոքա բոլորեքին պարտական են լինել գիշերօթիկ համաձայն ընդհանուր Կանոնադրութեան Վանական Դպրոցաց, եւ չը բնակիլ գիւղականաց տներում. եւ իւրեանց բոլոր պիտոյից համար բաց ի հանդերձեղէնէն, պիտի վճարեն վանից ամսական երկու ռուբլի, իւրաքանչիւր [illegible] կանխիկ: Իսկ հանդերձեղէնն իրենք պարտական են հոգալու համաձայն որոշման ընդհանուր կանոնադրութեան Վանական Դպրոցաց:

Հառիճոյ ընկերութիւնը վստահ է իւր համազգայնոց վրայ որ նոքա արդէն զգալով ուսման կարեւորութիւնը, Վեհափառ Հօր եւ ընկերութեան վաղեմնի ձգտմանց օժանդակելու պարտքը կը ճանաչեն իբրեւ անդամք ամբողջ մարմնոյն Հայ Ազգութեան: Ուրեմն Արագածոյ ստորոտում բազմած դշխոյաձեւ Հառիճն էլ պիտի պայծառանայ իւր արդիւնաւոր բուրաստանով. որ շիրակայ պտղաբեր հողի եւ կենդանարար ջրերի մէջ հիմնուած Հոգեւոր եւ մարմնաւոր բարիք կը մատակարարէ ուսումնածարաւ շինական դասու աղքատիկ մանկանց, եւ ունի ոչ սակաւ կենդանի պտուղներ եւ որոնք աքնում են անդադար մեր թշուառիկ ժողովրդի օգտի համար, եւ բարենպատակ ընկերութեան չնչին սերմն արդիւնաւորելով նրան եւ բոլոր բարեսիրաց մեծ մխիթարութիւն կը պատճառեն:

* * *

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ·

Եթէ ամենայն լրագրաց միակ նուիրական պարտքն է, որ հասարակութեանց կամ Ազգի համար որ հրատարակվում են, նոյն հասարակութեանց կամ Ազգայնոց՝ իւրեանց ներկայ կամ ապագայ բարօրութեանց նկատմամբ ունեցած ջանից և զգացմանց թարգման լինել, և նոյն կարեաց մշտաբարբառ քարոզ, ուրեմն անշուշտ պէտք է պատուական Արարատայ էջերում ընդունելութեան տեղի տանի հետևեալ յօդուածը, որ բացատրում է մեր Ալեքսանդրապօլ քաղաքի Հայ հասարակութեան երախտագիտական զգացմունքը և ճանաչողութիւնը մի այնպիսի վսեմ առարկայի՝ որ խոստանում է իւր ապագայ սերնդոցն բազդաւորութիւն մտաւոր և բարոյական զարգացմանց վերաբերութեամբ։

Բաց յայտնի է ամենեցուն՝ որ ինչպէս իւրաքանչիւր ազգախնամ բարերար կամ երախտաւոր երբ արժանի կ՚հանդիսանայ և կամ մեծայոյս կ՚լինի իւր երախտեաց պտուղն վայելելու, անշուշտ կ՚զգայ իւր սրտի մէջ մի հոգեկան բերկրանք և քաղցրութիւն, նոյնպէս միևնոյն բերկրանքն և քաղցր զգացմունքով լցվում են և այն անձանց սրտերը՝ երբ կամ իրողապէս և կամ աներկբայ յուսով արժանանալով՝ այնպիսի հաղուագիւտ բարերարաց անմահ և ամենաթանկագին երախտիքներին վայելելու, որպիսի և իցէ կերպիւ իւրեանց երախտագիտական սեպուհ պարտքն վճարելու բաղձին ժառանգորդ կ՚լինին, որով և օրինակ բարեաց կ՚հանդիսանան ուրիշ երախտապարտելոյ։ Այնպիսի ուրախութեամբ լցուելու արժանացան սոյն ամսեանի առաջին օրը քաղաքիս Հայազգի ժողովրդեան սրտերն։ Լրագիր ընթերցող ազգայնոց բաւական յայտնի է՝ առ Տէր հանգուցեալ արժանայիշատակ Իշխան Գաւհրաման Երկայնաբազուկ Արղութեանցի ազգօգուտ կտակը, որով բարեպաշտ և աղքատէր լուսահոգի հանգուցեալը ըստ մեծի մասին իւր առատանուէր արդեամբ քաղաքիս մէջ ձեռնարկեալ Եկեղեցւոյ շինութեան թերին լրացուցանելոյ նպատակաւ 2200 մանէթ որոշելուց զկնի, որոշել է 40,000 մանէթ նոյն Եկեղեցւոյ մօտ Հայազգի աղքատիկ օրիորդաց Ուսումնարան բանալու համար. որովհետև այդ Աստուածահաճոյ կտակի բովանդակութիւնը, և դոյն առթիւ մի քանի անգամ կարևոր տեղեկութիւնք հաղորդուած են «Մեղու Հայաստանի» լրագրի միջոցաւ, Ընթերցասէր ազգայնոց նոյնպէս և սրտագին ուրախութեան և երախտագիտութեան խորին զգացմունքներն բացատրուած են 'ի լուր ընդհանուր ազգի երկու յօդուածով, որոց մինը հրատարակուած է «Հայկական աշխարհի» անցեալ 1869 ամի երկրորդ համարի մէջ և միւսը պատուական Արարատայ առաջին թուումը նոյն ամի։

Այս 1869 թուականի առաջին օրը բաղդաւորեցաւ քաղաքիս Հայ հասարակութիւնը նոր տարւոյ հետ ուրախութեամբ սրտի շնորհաւորել և աւետել միմեանց մի այնպիսի նախախնամական անակնկալ յաջողութիւն, որ խոստանում էր նոր կեանք բազդաւորութեան իւր գեղեցիկ սեռի մտաւորապէս և բարոյապէս կրթուելու և արժանաւոր մայրեր պատրաստուելու նկատմամբ, ուստի և պարտք համարեց իւրեան միևնոյն օրը համախումբ հոգևորական դասուք կատարել հոգեհանգիստ և պատուել այն հաղուագիւտ բարերար անձի անմահանալի յիշատակը, որ այդ ամենացանկալի և

մեծաօգուտ յաջողութեան երկրաւոր պատճառ էր հանդիսացել:

Այս ամի և ամսեանի առաջին օրը այդ երախտագիտական սուրբ պարտականութիւնն դարձեալ վճարեց տեղւոյս Հայոց երկու Եկեղեցեաց մէջ և փառաւորապէս հոգեհանգիստ կատարել տալով, ինչպէս որ ուխտել էր ամ ըստ ամէ կատարելու այդ հոգևոր հանդէսը՝ մեծ ուրախութիւն և նոր տարեգլուխ համարելով իւր ազգայ սերնդոց դաստիարակութեանը և յառաջադիմութեանը՝ գիտութեան և բարոյականութեան ասպարիզի մէջ, որ միակ աղբիւր է թէ մարմնապէս բարեկեցութեան և թէ հոգեպէս երջանկութեան:

Յանկալի էր, որ առաքինազարդ հանգուցելոյ Աստուածասէր և բարեպաշտ իշխանուհի ամուսինը և միւս գերապատիւ ազգասէր կտակակատարները կրկնապատկէին իւրեանց գովելի աշխատութիւնը օր առաջ 'ի կատար հասուցանելու թէ իւրեանց ամենասիրելի երջանկայիշատակ Կտակարարի ազգօգուտ նպատակը, և թէ տեղւոյս Եղբայրոց ջերմագին սուրբ փափագը, որոյ մասին թէև ընդհանուր հասարակութեանց ընտրեալ անձանց համագումար ժողովով և նոցա համահաւանութեամբ ընտրուեցան երկու աշխատասէր անձինք՝ մին Կղերականաց կարգից արժանապատիւ Տէր Յովսէփ Աւագ Քահանայն Կոստանեանց՝ Անդամ Հոգևոր Կառավարութեան Հայոց Աղեքսանդրապօլու, և միւսն պատուելի քաղաքացւոց կարգից Յարգոյապատիւ Պարոն Աղապար Խօջայեանց՝ նոյնպէս տեղւոյս քաղաքական պաշտպանութեան մինն, որ բոլոր հասարակութեան կողմից որպէս պատգամաւոր երթան Տփխիս և հասարակական երախտագիտութեան զգացմունքը, որոց որ արժան է, անձամբ անձին յսուլի յայտնելով զնին՝ կարևոր հոգացողութիւններն անեն յիշատակեալ բարեպաշտ կտակի ըստ ուղիղ նպատակին անյապաղ կատարման մասին: Սակայն առ ժամն այդ որոշմանը կատարումն առայժմ անյարմար համարելով ուղարկուեցաւ հաւատարմաթուղթ հասարակութեան կողմից՝ մեր քաղաքացի երկու աւագ անձանց վերայ, որք դեռևս գտնվում են Տփխիս, այնէ Պ. Պետրոսի Չիթողձեանց և Պ. Գրիգորի Ոսկիպէյլեանց, որպէս զի մինչև ընտրեալ պատգամաւորաց գնալն՝ գործ 'ի կողմանէ հասարակութեան աշխատին և որոնցից որ արժան է՝ պատշաճաւոր կերպիւ խնդրեն կտակի ճշգիւ և անյապաղ կատարումն փութացուցանելու մասին: Բարեբաղդաբար ինչպէս որ լսվում է, այդ պարոններն սոցել էն Եկեղեցւոյ թերութիւնը լրացնելու մասին կտակած 2200 մանէթն, որպիսի ուրախալի լուրն ստանալով և մեր հասարակութիւնը ինչպէս որ մինչև ցարդ վստահանալով կտակակատարների ազգասիրութեան վերայ՝ մեծայոյս էր վաղ թէ անպատճառ իւր համար որոշուած և պատրաստուած հոգևան բարիքն վայելելու, նոյնպէս և այժմ աւելի ևս հաստատուեցաւ իւր յուսոյ մէջ, և մինչև անգամ առանց ընտրեալ պատգամաւորներին ուղարկելու ևս անկասկած է թէ որպէս անմահանուն Հանգուցելոյ Աստուածասէր և բարեհամբաւ կտակակատարներն ինչպէս յարգող և սրբութեամբ կատարող նորա բարենպատակ աւանդը՝ Նորանից Աստուածեան նիւթական տաճարի թերութիւնն լրացնելու մասին կտակածն 'ի կատար հասուցին, նմանապէս և նոյն Ամենաբարեաց համար բանաւոր տաճարներ արժանապէս պատրաստելու մասին կտակածն ևս անշուշտ 'ի կատար

ածելու են ոչ անազատ. որպիսի անխափելի յուսով մեր հասարակութեան հետ ես եւս սպասում եմ սոյն ազգաօգուտ առարկայի իրագործուելուն առեալքն հաղորդելու 'ի լուր ընդհանրութեան սիրելի Եղբայրնոցս 'ի յուսախութիւն և 'ի մխիթարութիւն նոցա:

Մկրտիչ Վարժապետ Արաբաջեանց:

Է 4-ն յունվարի 1870 ամի

յԱղէքսանդրապօլ:

(Սոյն այս գրութիւնը հրատարակուելէն զկնի՝ խմբագրութիւնս ևս սրբազան՝ պարագ կը համարի յառաջ խնդրել արժանայիշատակ հանգուցելոյ ազնիւ կտակակատարներէն, որպէս զի ազգասիրաբար բարեհաճին Աղէքսանդրապօլոյ մէջ կառուցանելիք Աղջ. օրիորդաց դպրոցին շինութեան և կատարելութեան յատկացած քառասուն հազար րուբլէն հանգուցեալ անմահ-բարերար Արղութեանց Իշխանին կտակին և սրբազան ըղձին համաձայն ճշդութեամբ և փութով հատուցանելոյ՝ որոց արժանին է, ինչպէս հատուցած են ս. եկեղեցւոյ շինութեան 'ի նպաստ կտակեալ **2200** րուբլին):

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ:

Ցաւօք սրտի կը ծանուցանեմ, որ սոյն ամսոյս 9-էն առաւօտեան ժամ 11-ին կնքեց իւր մահկանացուն Գերազնիւ Տիգրանեանց Յովհաննէս Աղայի մայր բարեպաշտուհի մահտեսի Մարիամ Տիկինն 'ի հասակի 84 ամաց: Նոյն օրը յերեկոյեան ժամերգութեան միջոցը տարուեցաւ յեկեղեցին բաւական շքեղ հանդիսիւ. իսկ հետեւեալ օրը կատարուեցաւ զկնի Սրբոյ պատարագին, նորա յուղարկաւորութեան տըխուր հանդէսը ամենափառաւոր կերպիւ, որին աւելի շքեղացնում էր նորա Դագաղի մօտ շրջապատեալ իւր Գերազնիւ միակ որդւոյ անքուն հսկողութեան եւ պաշտպանութեան ներքոյ եղած եւ իւր իսկ անձ բումը 'ի հինգ ամաց հետէ գտնուած Արաբաչեան եղբարց Առանձին Ուսումնարանի աշակերտների բազմութիւնը, որոնց նա ինքն առ Տէր հանգուցեալ Տիկինը, չէր ծանծրանար գոդցես յիւրաքանչիւր օր հրաւիրել եւ յորդորել դէպ 'ի ցանկալի Ուսումը, խրախուսելով նորանց, դէպ 'ի նոյն մխիթարարատ առարկայն փութացնող ձեռնահաս միջոցներով եւ կոչելով նրանց իւրեան զաւակներ եւ սաներ. որոնք եւ 'ի նշան երախտագիտութեան որպէս բարեպաշտուհի հանգուցելոյն, նոյնպէս եւ իւրեանց վրայ խնամարկ Գերազնիւ Տիգրանեանցի, զոյգընթաց կարգաւ ուղեւորեցին նորա փառաւոր դագաղը մինչեւ ցՀիառուած գերեզմանոցը, ուր թաղուած են սոյն Տիգրանեանց ազնիւ շառաւիղից 'ի Քրիստոս փոխուած ննջեցելոց ոսկերտիքը. ուրանօր եւ թաղման կարգը կատարելու միջոցը վերոյիշեալ Ուսումնարանի նախապատրաստական դասատան Ուսուցիչ Սարգիս Արաբաչեանցն կարդաց մի սրտառուչ դամբանական 'ի դիմաց բոլոր աշակերտաց, որոյ մէջ Ակնուհի Տիկնոջ դէպ 'ի յեկեղեցին եւ յաղքատս ցուցած ձեռնտուութիւնները յիշելով, կը հրաւիրէր ծերունազարդ հանգուցելոյն օրհնել իւր սաները յերկնուստ. օրհնել, որպէս զի նոքա շնորհիւ իւր Գերազնիւ որդւոյն աճին 'ի շնորհս եւ զարգանան 'ի բարի գիտութիւնս յօգուտ ազգի եւ յիշատակ իւր բարեպաշտական հոգւոյն: Ճառը եւ թաղումը աւարտելուց յետոյ բացուեցաւ հասարակաց մի բազմախորտիկ սեղան, յորոյ վայելելով ամէն մի աղքատ եւ հարուստ ըստ իւրաքանչիւր չափու, կըբարեմախթէին Արքայութիւն հանգուցելոյ հոգւոյն, եւ արեւշատութիւն իւր միակ Ազգասիրոյ Գերազնիւ որդւոյն. որոնց հետ եւ ես միշտ բարեմախթելով նոյնը, մնամ Ազգապարծան Խմբագրութեանդ յառաջընթացութեանը ցանկացող

Աղէքսանդր Արաբաջեանց

Է 15-ն դեկտ. 1869 ամի

յԱղէքսանդրապօլ:

(Սոյն այս նամակագիր Պարոնը՝ կը հաղորդէ մեզ նաեւ, թէ՝ անցեալ դեկտ. ամսոյ **14** երեկոյին՝ **10**-երորդ ժամը **25** րոպէ անցած՝ երկրաշարժ պատահած է Աղէքսանդրապօլոյ մէջ հետզհետէ մի քանի անգամ կրկնելով՝ իւրաքանչիւր անգամն գրեթէ $\frac{1}{4}$ ժամ միջոց տալով, բայց մի քանիսն թոյլ և թեթև, միայն առաջինը սաստիկ եղած է մինչև $1\frac{1}{2}$ րոպէ տևողութեամբ: Այսու ամենայնիւ գոհութիւն Աստուծոյ, առանց վնասուց անհետացած է այժմ երկրաշարժը: Այս առթիւ նամակագիրը հետևեալը բնագրից գննութեան կը յանձնէ:

«Բայց այսու ամենայնիւ այսպիսի երկ-

բաշարժութեանց իրական պատճառն և հետևանքն բնագէտներին զննելու, աւելորդ չեմ համարիր գրել միայն այս երկու դիտողութիւնները, որ նախ քան զայն տարժանելի ժամն, և զկնի նորան, հարկադրուեցայ անելու: Առաջինն՝ որ կարծես թէ բնութիւնն ինքն էր՝ գթալով իւր խղճալի որդւոյ վերայ, կէս ժամու չափ յառաջ իմացումն կտայ նորանց այդ սոսկալի եղելութիւնը, փոխելով սովորական օդը մի այլ ծրծմբախառն կազի՝ որ գոգցես թէ օդի մէջ ծծումբ ծուխ տուած լինէր, որը թէպէտ նոյն միջոցին ինձ հետ շատերն էլ զգացին, բայց անփորձառութիւնը արգելեց մեզ մակաբերելու՝ թէ սրան շուտով պէտք է յաջորդէ մի տարժանելի ժամ, մի ահաւելի վայրկեան: Երկրորդ՝ որ զկնի նոյն երկրաշարժութեանը յաջորդեց մեր քաղաքի մէջ թեթև չոր հազ և հարբուխ ասուած ցաւը, այնպէս որ այսքանի օրս հազիւ ուրեմն կը գտնուէր անձն, որ ազատ լինէր յիշեալ ախտից և այն բաւական խստութեամբ մի՞դուցէ այս ևս հետևանք լինէր նոյն երկրաշարժութեանը: Այս հիւանդութիւնը թէ և տարափոխիկ է և ըստ մեծի մասն ցրտից կ՚յառաջանայ, բայց մի՞ գուցէ և օդի յանկարծ փոխուելուց ևս պատճառի կամ աւելի ևս սաստկանայ, որը զարմեալ կ՚յանձնեմ բժշկաց՝ կամ փորձառու մարդկանց քննադատութեանը»:

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ

Անցեալ դեկտեմբ. ամսոյ 16-ին առ Աստուած փոխեցաւ ս. Աթոռոյս միաբան Սրբազան Մկրտիչ Եպիսկոպոսն Յովակիմեանց Աստրախանցի, և յաջորդ օրը՝ արժանավայել հանդիսիւ մարմինը 'ի գերեզման ամփոփեցաւ միաբանութեան հանգըստարանին մէջ:

Հանգուցեալը 1827 թուականում Կուսակրօն քահանայութեան աստիճան և վարդապետական մասնաւոր իշխանութիւն ընդունած է Աստրախանայ Առաջնորդ Յովհաննէս Արք եպիսկոպոսէ Գառնակերեանց:

Բաւական միջոցով Նոր-Նախիջևանայ ս. Խաչ վանուց վանահայրութիւնը, և ապա յաւուրս երջանկայիշատակ Ներսէս և Մատթէոս Կաթողիկոսաց Մայր Աթոռոյս մէջ զանազան պաշտօններ, ինչպէս (Վաղարշապատայ) ս. Հռիփսիմեայ վանուց ևս վանահայրութիւնը վարելէն զատ, նա և ըմակի շինութեան վերակացութիւն կատարած է:

Իւր անխոնջ աշխատասիրութեամբ և հաւատարմութեամբ սիրելի եղած էր և Ն. Հ. Հայրապետին մերոյ, որ նորա վերակացութեան յանձնած էր ս. Աթոռոյս տաճարի խորանաց և ուսումնարանի շինուածքները: Նա երկու տարիէ 'ի վեր ան- այն սիրով և ջերմեռանդութեամբ կը վարէր:

1868 թուականում արժանացաւ Եպիսկոպոսական բարձր աստիճանին:

Վ. Ն. Հ. Կաթողիկոսը որ Ազգի և եկեղեցւոյ հաւատարիմ և անձնանուէր պաշտօնեայքը գիտէ 'ի կենդանութեան և յետ վախճանին պատուել, 'ի նշան յարգանացն առ հանգուցեալ Մկրտիչ եպիսկոպոսն, և 'ի խրախոյս ամեն միաբանից, բարեհաճեցաւ իւր ներկայութեամբ շքեղացուցանել նորա թաղման յուղարկաւորութեան հանդէսը, ևս հրամայեց համայն միաբանից՝ պաշտօնի, և աղքատաց՝ ողորմութիւն բաժանել և կերակուր տալ:

ԱՒՍՏՐԻՈՅ Վ.ՍՀ. ԿԱՅՍԵՐ ՇՆՈՐՀՔՆ ԱՌ ԵՍԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԷՆ

Անցեալ անուր թերթով մը պատմեցինք Աւստրիոյ Վ.ՍՀ. Կայսեր Ս. Երուսաղէմ այցելութեան միջոցին, նաև մեր Եսայի Ս. Պատրիարքին՝ նորին վեհափառութեան մատուցած յարգանքն, և նորին վեհափառութեան՝ մեր Ս. Յակոբայ վանքն ու պատրիարքարանը կատարած այցելութիւնը։

Օրագրին մէջ Ս. Երուսաղէմէն գրուած նամակի մը մէջ կը կարդանք որ նորին վեհափառութիւնը իւր Հիւպատոսին ձեռօք Եսայի Ս. Պատրիարքին յատուկ խաչ մը շնորհելէ զատ, յատուկ շնորհակալութիւն յայտներ է նաև Հայոց կողմէն իրեն ցուցուած համակրական ընդունելութեանը։

Նոյն նամակին մէջ կը կարդանք նաև որ վերջին քրիստոնեայ թագաւորը Երուսաղէմ երթալէն ի վեր 400 տարի է եղեր, որ Ֆրետերիկոս Բ. նոյնպէս Աւստրիոյ կայսրն է եղեր, որ Գրիգոր Թ. Հռոմայ պապէն բանադրուած ըլլալով, Լատին կղերին կողմանէ եկեղեցական հանդէսներով չէ ընդունուեր Ս. քաղաքին մէջ, և որ հոն Երուսաղէմի թագաւոր պսակուելով, նոյն հանդէսին ներկայ գտնուեր են միայն Հայ վարդապետները Լատին կղերին տեղ, անոնց պակասութիւնը լեցնելով։

Ահաւասիկ նոյն նամակին Եսայի սրբազանին եղած շնորհքն ու շնորհակալութիւնը պարունակող մասը։

«Քաղաքիս Աւստրիական Մեծ. Հիւ-
«պատոսը անցեալ (նոյ.) եօթներորդ օրը ան-
«ձամբ գալով ի Սուրբ աթոռս նուիրեց
«Նորին Վ.ՍՀ. Յովսէփ կայսեր կողմէն ա-
«կնակուռ գեղեցիկ խաչ մը*։ Այս շը-
«նորհքը որչափ որ մեծ և եզական է, այն-
«չափ աւելի նշանակութեան արժանի է
«իւր շնորհակալութիւնը և գոհունակու-
«թիւնը, զոր իւր Մեծ. Հիւպատոսին ձեռ-
«քով արտայայտեց Սրբազան Պատրիարքին։

Մանզումէ, Թիւ 1089։

Կարնոյ գեր. Առաջնորդը երէկ իւր վիճակը ուղեւորեցաւ ըստ հրամանի Բ. Դըռան, ինչպէս երէկ ծանուցած էինք։

Փունջ, Թիւ 456

Կարինէն լուր կուտան թէ Գեր. Յարութիւն արքեպիսկ. 1-ին յիշեալ քաղաքը հասնելով՝ տեղական իշխանութեան կողմանէ մեծ պատւով և ժողովրդեան կողմանէ ալ եռանդագին ցնծութեամբ ընդունուեր է։

Վ.սեմ. կուսակալը քանի մը բարձրաստիճան պաշտօնակալ և երկու հարիւր չափ զինուոր ընդ առաջ ղրկեր է Նորին սրբազնութեան մինչև ժամ ու կէս ճամբայ տեղ, և Հայ ժողովրդէն ալ մեծ բազմութիւն և եկեղեցական դասն ալ զինքը քանի մը ժամու ճամբայ տեղէ դիմաւորելով, հանդիսիւ քաղաքը մտուցեր են։

Մասիս օրաթերթ, Թիւ 470.

Անցեալ շաբաթ գիշեր (նոյ 15) Սամաթիոյ Հայկական գեօստարանը իրիկ. խօսարան բաց էր։ Ներկայ էին 200-էն աւելի ազգայինք, որոց միայն 10—20ը օրիորդք էին։ Մէկ քանի ատենախօսութիւններ եղան, որոնք գլխաւորաբար Հայաստանի ախուր վիճակը կընկարագրէին։ Ներկայ եղողներուն մէջ պատկառելի լռութիւն մը տիրած էր։ Այս առթիւ 2000 շուրուշի մօտ դրամա-

*) Ըստ 69 Թ. Օրագրոյ Ֆրանսուա-Ժօզէֆի շքանշանը։
Ծ. Խմբ. Արարատայ.

կան Հաւաքում մ՚եղեր է, ի նպաստ մերկ տղոց Եւաղաղլիւր գիւղն Մշոյ:

Այսուհետեւ յիշեալ վարժարանին մէջ որոշեալ օրեր այսպիսի կարեւոր ատենախօսութիւններ պիտի ըլլան:

Սամաթիա ահա այս մասին ալ օրինակ կուտայ ուրիշ թաղերու: Աւելորդ է ըսել թէ՝ խօսարաններու պէտքը բոլոր քաղաքակրթեալ ազգաց մէջ ճանչցուած ըլլալով, բազմաթիւ խօսարաններ հաստատուած են:

Սամաթիոյ Հայկական ընկերութիւնը բոլոր ազգային Հայոց շնորհակալութեան արժանի է, իւր այս շահաւէտ ձեռնարկութեան համար:

Փունջ օրագիր, Թիւ 456

Երէկ (Նոյ. 18) Ամեն. Սրբազան Պատրիարք Հայոց Օգոստափառ Ինքնակալին ներկայացաւ և անկէ Բ. Դուռը գնաց:

Ծիածան, Թիւ 26

Շուէտի վեհափ. Թագաւորին Մեծ-Եխոռապետ մօսիւ Տէմիրժիօնը, նոյն տէրութեան պատերազմական փուէկաթով մը Եգիպտոս հասեր և մատուցեր է բարձրա. Խըտիվին, վսեմ. Նուպար փաշային և մէկ երկու եգիպտական գլխաւոր պաշտօնատարաց պշքանշանները՝ զորս յանձնած էր իրեն Շուէտի վեհապետը: Ուրախ սրտիւ իմացանք և կը փութանք ծանուցանելու մեր ընթերցողաց, թէ յիշեալ մեծապատիւ պաշտօնատարը՝ որ սիրելի եղած է յոյժ Շուէտի Թագաւորին, Հայ է ազգաւ, Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ հաւատարիմ զաւակ և անունն ալ Տէմիրճեան է, զոր լրագիրները սխալմամբ Տէմիրժիօն գրած են:

Արշալոյս

Հայ ազգին անհատներէն այսչափ զանազան տէրութեանց այսպիսի բարձր պաշտօններու մէջ գործածութիւնը, ապացոյց է Հայոց՝ հաւատարիմ, գործունեայ ու ճիշդ ծառայութեանցը իրենց գտնուած պաշտօններուն մէջ:

Մանզումէ Թիւ 1105

Արմաշի վանահայր գեր. Տ. Գէորգ Ս. եպիսկոպոսը հանգիստ մտեր է վանքը: Իզմիտի մէջ թէ գեր. Փոխ.-առաջնորդին և թէ ժողովրդեան կողմանէ սիրալիր ընդունելութիւն եղեր է Նորին գերապատուութեան: Քաղաքին մեծ. Մութէսարըֆն ալ յարգանօք ընդուներ է Գէորգ Սրբազանը:

Յուսալի է թէ, այսուհետեւ Իզմիտի ազգայինք առհասարակ հաշտ աչօք կ՚նային Արմաշի վանուց վրայ, որ՝ ինչպէս շատ առիթներով ըսած ենք՝ ազգային յառաջադիմութեան համար օգտակարագոյն հաստատութիւն մ՚է:

Փունջ օրագիր, Թիւ 474

Երէկ Գեր. Սեղբեան սրբազան Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյն Ս. Պատարագ մատոյց, վասն հոգւոյն Գէորգ պէյ Ոսփայեանի ազնիւ (Իսփոլիկ) տիկնոջ որ՝ բարեհաճած էր 100 ոսկի նուիրել Եդաղեան վարժարանի:

Օրագիր, Թիւ 60.

Ընձնուէր ընկերութիւնն Ասիոյ շատ մը տեղերն հեռահետէ ճիւղեր կ՚արձակէ. այս շաբթու ձեռքերնիս անցած նամակ մը կը ծանուցանէ, որ Սեբաստիոյ մօտերը Մանճըրլը ըսուած գիւղը ճիւղ մը հաստատուեր է, տեղւոյն Զաքարիա եպիսկոպոսին ձեռօք՝ որ Սեբաստիայէն դասագիրք կը խնդրէ եղեր:

Մենք ևս կը խնդրենք որ Պօլսեցիք Համակրական աչօք նային այս ընկերութեան, որ Հայաստանի մէջ մտաւորական լոյսը կը սփռէ, և կը փափաքինք տեսնել մայրաքաղաքիս ուսումնասէր ազգայնոց առ այն մատուցանելիք ձեռնտուութիւնը, որու ըստ ամենայնի կարօտ է, մանաւանդ թէ նոյն իսկ Սեբաստիոյ մէջ ոխերիմ և խաւարամիտ թշնամիներէ սաստկապէս կը նեղուի:

Ծիածան. Թիւ 59:

Ուրֆայի չորս իշխաններէն Նէնի Ֆիւնտա Աստուածատուր Էֆէնտին, զոր Բ. Դուռը միւս երեք ընկերացը հետ Ուրֆայ ժողովին անդամ անուանած և Մէճիտիէ նշանաւ պատուած էր, անցեալները մայրաքաղաքէս Հալէպ և անկէց ալ Ուրֆա դառնալէ քանի մ'օր ետքը հիւանդացեր և չկրնալով բժշկուիլ վախճաներ է:

Մասիս. Թիւ 468:

Գեր. Սահակ եպիսկոպոսի և Արժ. Տէրտէրեան վարդապետի Հայաստանեան ուղևորութեան պատմութիւնը:

(Շարունակութիւն և վերջ)

Գեր. Սահակ սրբազան եւ իր Արժ. ընկերը Վակշում Կօվազի իշխանէն ալ թէ եւ բանիցս իրենց միաբանութեան ծոցը վերադառնալու հրաման խնդրեր են, բայց միշտ սա պատասխանը առեր են թէ «զձեզ վար դնելը կամ ճամբելը ետքէն ժողովով որոշուելիք խնդիր մըն է, այն ատենը լուր կուտամ, հիմայ հանգիստ նստեցէք»: Քիչ մը ետքը Տօքիա Քիտանըմէրէթ ըսուած գիւղը խրկեր է զնոցին սրբութիւնը, գիւղացւոց հրաման խրկելով որ օրինաւոր ուտելիք տան. բայց հոն ալ գրեթէ չքաւորութեամբ կեանք անցունելու դատապարտուեր են. եւ վերջապէս նոյն գիւղէն մահուան վտանգներէ հազիւ հազ ազատելով, որուն մանրամասն պատմութիւնը ընել խիստ երկար կըլլայ, Պէլէսայի Ապունա Թէքլէհիմանօթ կոչուած տեղը ցրցուեր է նոցին բնակութեանը համար, ուր եւս քանի մը անգամ իրենց վերադարձը խնդրեր են գրով, բայց «ճանապարհ չկայ, ես զձեզ օրինաւոր կերպով պիտի խրկեմ, հիմայ այնչափ հարուստ չեմ, քիչ մը ատեն սպասեցէք ; եւայլն եւայլն» կըսէ եղեր. ասանկով տարիի մը չափ ալ այն կողմերը անցունելու պարտաւորուեր են մինչեւ որ վերջին օրերս Մուսավայի գաղղիական եւ միանգամայն Անգղիական հիւպատոս Պ. Մունզինճէրիի մէկ նամակը եկեր հասեր է Վակշում Կօվազիին ուղղեալ, որով հիւպատոսը իրեն կիմացունէ թէ Թէկրիի ճամբան բաց է, եւ թէ Տէճաճ Քասան (Քասայի իշխան) պատրաստ է ճամբայ տալու. ուստի կաղաչէ որ իւր քովը հիւր եղող եկեղեցականներուն Ս. Երուսաղէմ վերադառնալու հրաման տալու բարեհաճի. այս լուրը նոցին սրբութեան ալ հասեր է Մուսավվա բնակող Պ. Առաքել Յ. Ճիվէլէկեան հայազգի անձին կողմանէ յատուկ գրով մը, որուն ազգասիրական եռանդը գովութեան արժանի է: Գեր. Սահակ եպիսկոպոսն ալ անմիջապէս խնդրագիր մը ուղղեր է իշխանին, որպէս զի իրենց հրաման տալոյ բարեհաճի. նա ալ խնդրուած հրամանը տալու վերջապէս զիջեր եւ իւր կողմանէ երկու ջորի պարգեւելով ճամբայ հանել տուեր է զնոյին սրբութիւնը, (ինքը հինգ վեց աւուր ճամբայ հեռի կըգտնուի եղեր այն միջոցին), եւ միանգամայն իւր հաւատարիմներէն մէկը յատկապէս պատգամաւոր ղրկելով նորին միջնորդութեամբը աղաչեր է որ հիւպատոսին հետ համաձայնութեամբ միջնորդ կանգնին իւր եւ Թէկրիի իշխան Տէճաճ Քասային մէջ հաշտութիւն ընելու, եւ յաւելցուցեր է թէ ներողամիտ պէտք է ըլլան որ ըստ արժանւոյն պատուած չէ զիրենք. նոցին սրբութիւնն ալ արժան եղածը տնօրինելու խոստանալով, ներկայ տարւոյս աւագ չորեքշաբթի օրը նոյն երկրէն ճանբայ ելնելու պատրաստուած ժամանակնին, տեղացւոց բոլորին ալ համակրութիւնն արդէն գրաւած ըլլալովնին, մեծէն մինչեւ պզտիկը լալոտ աչօք աղաչեր են որ չերթան ու Գեր. Սահակ եպիսկոպոսը իրենց Ապունա (առաջնորդ) ըլլայ փոխանակ Ղպտի եպիսկոպոսին, եւ Վակշում Կօվազիին ալ բարկացեր ու հայհոյութիններ ըրեր են որ նորին դերապատուութեանը պէս եպիսկոպոս մը ձեռքէ կը հանէ կոր. այսպէս բոլորին ալ սիրտը հետերնին տանելով եւ նոյն երկրին կառավարչին հրամանաւը 200ի չափ զինուոր իրենց ուղեկից ունենալով մեկներ են մեր եկեղեցականք. բայց գիւղացւոց բեռ մը չըլլալու համար կէս ճամբէն ետ դարձուցեր են զինուորները. եւ նոյն ինքն գիւղացւոց առաջնորդութեամբ Ակօ ըսուած լեռնային եւ անջրդի ճանապարհէն բազում դժուարութեամբ եւ նեղութեամբ 42 օր. ճանապարհորդութիւն ընելով Տէճաճ կամ Տէճազմաճ Քասայի տիրապետութեան Թէկրիի

երկրին Ռամլա անուն մայրաքաղաքը հասեր էն. բայց նոյն իշխանը նոյն տեղէն 5 ժամու չափ հեռի Աքաւմ քաղաքը գտնուելուն պատճառաւ, եկեղեցականք իմացուցեր էն իրենն որ հոն երթալ, եւ թէ նոյն տեղւոյն եկեղեցին տեսնել կը փափաքին. նա ալ գալերնուն մեծապէս շնորհապարտ ըլլալիքը յայտնելուն վրայ, Նոյին սրբութիւնը ուղղակի նոյն քաղաքի եկեղեցին գացեր են, որ հնութիւն մը է կըսեն, եւ եկեղեցիէն ելնելնուն իշխանին նոր կանոնաւոր զօրքերէն 50ի մը չափ զինուոր զիրենք բարեւեր եւ իշխանին վրանը առաջնորդեր են, որուն մօտեցած ատեննին իշխանը անմիջապէս վրանէն դուրս ելնելով մեծ պատուով դիմաւորեր է զՆոյին սրբութիւնը եւ սուրբ խաչին երկրպագեր է. յետոյ իւր վրանին քովը ուրիշ վրան մը յատկացուցեր է որ հոն հանգչին. եւ պահպանութեան համար ալ զինուոր տուեր է: Հետեւեալ օրը իւր բանակին առաջնորդութեամբը եւ ինքը եկեղեցականաց հետեւէն քալելով Ռամլա մտեր են, ուր Թնդանօթներ արձակել տուեր է ի պատիւ հայ եկեղեցականաց, ինչպէս որ սովորութիւն է եղեր նոյն արարողութեամբ ընդունիլ Ղպտի եպիսկոպոսը. հոս շաբաթէն աւելի մեծ պատուով հիւրընկալեր է զՆոյին սրբութիւնը. եւ սոյն միջոցին բոլոր ճամբու վրայ գտնուած քաղաքաց լուր խրկեր է որ նոյն եկեղեցականներն ամեն տեղ դիմաւորելով, արժանավայել պատուով ընդունին:

Գեր. Սահակ եպիսկոպոսն իշխանին այս մարդասիրական գովելի յատկութիւնները տեսնելով, զոր մինչեւ նոյն օրը չէ գտած ուրիշ մէկու մը վրայ, քովը գտնուած սատափի վրայ նուրբ փորագրեալ քանի մը կտոր այլ եւ այլ պատկերներ եւ խաչեր նուիրեր է, որոնց հետ նաեւ սրբոյն Ստեփաննոսի մասունքը պարունակող Սէյլանի գոյնզգոյն քարերով յերիւրեալ ոսկի խաչը, զոր օրինաւոր մէկու մը ընծայուիլը պատուիրած է եղեր Երուսաղէմայ սրբազան Պատրիարքը. իշխանն ալ ի փոխարէն յիշատակի իւր վիզը կախուած փոքրիկ ոսկի խաչը Նորին գերապատուութեանը նուիրեր է. նաեւ Նոյին սրբութեան հեծանելեացը յատկացեալ զարդարուած երկու ջորի եւ երկու ուրիշ ջորի ալ իրենց բեռերուն համար նուիրելէն զատ, 1000 հատ աւստրիական թալէր շնորհեր է ճամբու ծախքի համար, եւ խոստացեր է թէ Ս. Երուսաղէմայ վանքին ալ արժանավայել նուէր մը պիտի ընէ ժամանակին. միանգամայն սա նշանակութեան արժանի պատուէրը ըրեր է, թէ այսուհետեւ Հապէշաստանէն Ս. Երուսաղէմ ուխտի ով որ գայ ու ձեռքը իւր իշխանական կնքովը կնքեալ հրամանագիր չունենայ, չըլլայ որ ընդունին ու պաշտպանեն, որպէս զի հինաւուրց սովորութիւնը նորէն հաստատուի.

նաեւ ծանուցեր է թէ Եգիպտոսէն նոր գալիք Ղպտի եպիսկոպոսին, որ ճամբան է եղեր, գրեր է թէ Հապէշաստան չմտած զիրենք տեսնէ անգամ մը եւ ժողովք ընէ, որպէս զի երկրին կրօնական պիտոյիցը լիովին տեղեկութիւն ստանայ. «ըստ որում երկու տարի է որ, ըսեր է, Ձեր սրբազնութիւնը աղէկ տեղեկացած է այս մասին. ուստի կաղաչեմ որ Նորին գերապատուութիւնը տեսնելու բարեհաճիք, եւ ի միասին ժողով ընելով, հարկ ու պատշաճ եղածը իմաց տաք իրեն» ըսելով յուլիս 5ին ճամբայ հաներ է զՆոյին սրբութիւնը, եւ մինչեւ կէս ժամու ճամբայ ուղեկից եղեր է զօրօք հանդերձ եւ թմբկաց ու սրնգացնուագներով. եւ իրարմէ բաժնուելու ժամանակ Նոյին սրբութիւնը ջորիէն վար իջնելով զօրքը օրհներ եւ խրատ տուեր են որ իշխանին յարգն ու պատիւը քաջ ճանչնան եւ իրեն հաւատարիմ ծառայութիւն ընեն. յետոյ իշխանին փոխանորդը բաւական զօրօք մինչեւ մէկ աւուր ճամբայ Պիհիրայ ըսուած գիւղը ուղեկից եղեր է, ուր Գեր. Սահակ եպիսկոպոսը բանակին մեծ թմբուկը պիտի օրհնէ եղեր ըստ խնդրանաց նոյն փոխանորդին, եւ սոյն առթիւ մեծ հացկերոյթ մը ալ պատրաստուեր է. թէ հացկերոյթին եւ թէ թմբկին օրհնութիւնները տրուելէն եւ նոյն գիշերը հոն անցունելնէն ետքը, հետեւեալ առտուն եկեղեցականք հրաժեշտնին տալով ճամբորդութիւննին շարունակեր են, ամեն տեղ սիրալիր ընդունելութիւն գտնելով, մինչեւ որ Ասմարա ըսուած սահմանագլուխը հասեր են. ահա սոյն տեղը տեսակցեր եւ պատուիրեալ ժողովը ըրեր են վերոյիշեալ նոր Ղպտի եպիսկոպոսին հետ, որ Նոյին սրբութեան տուած տեղեկութիւններուն համար մեծ շնորհակալութիւն յայտներ է. այսպէս իրարմէ բաժնուելով կէս օրէն ողջամբ եւ անվըտանգ Մուսավվայ հասեր են. ուր նոյն տեղի վերոյիշեալ հիւպատոսը զիրենք սիրով ընդունելով, Նոյին սրբութեան եւ իրենց ընկերակցաց ու սպասաւորաց ընդամենը 8 հոգիի համար մինչեւ Սիւէյզ պէտք եղած շոգենաւի նաւաղինը հոգացեր է. իսկ Իզմիրի «Արշալոյս Արարատեան» լրագրէն առնելով թիւ 558 օրաթերթնուդ մէջ հրատարակուած 40 լիրայի արժողութեամբ հաղուստ եւ 1000 Սպանիոյ թալեր պատրաստ դրամը, եթէ Գահիրէի Անգղիոյ ընդհանուր հիւպատոսը յիրաւի յուղարկած է ի Հապէշաստան առ Գեր. Տ. Սահակ եպիսկոպոս, Նորին Գերապատուութեան ձեռքը ասոնց մէկն ալ չէ հասած երբէք:

Ահա սոյն պատմութեան ընթացքէն կը տեսնուի որ մեր տարաբաղդ նուիրակները ուր որ գտնուեր են, նոյն տեղւոյն կամ երկրին տիրող իշխանը չէ ուզեր որ ձեռքէ հանէ այսպիսի աւար մը, որ ծրիապէս ձեռք

անցեր է. վասն զի ըստ հին սովորութեան, Եգիպտոսէն բերել տրուած Ասիունան (եպիսկոպոսը) միշտ տասն հազար Թալէրի կը նստի եղեր. նաեւ սա զիտաւորութեամբ ալ նոյն եկեղեցականները իր քովը պահել կուզէ եղեր որպէս զի Գեր. եպիսկոպոսին ձեռամբ օր մը Թագաւոր կարենայ օծուիլ. իսկ Նոցին սրբութեան այնչափ երկար ժամանակ լուր չըկրնալ տալերնուն պատճառը, թէ՛ նամակ յանձնելու յարմար մէկը երբէք չգտնելնին եւ թէ՛ ճամբաներուն ապահով չըլլալն է եղեր:

Մեր աղատեալ եկեղեցականաց անձնուիրութեամբ յանձն առած տաժանելի ճանապարհորդութեան պատմութիւնը առա այս տեղ լմնցունելէն առջը, Հապէշաստանի կացութեան վրայօք ալ ակնարկ մը ընելը պատշաճ կը դատիմ:

Հապէշաստան կանոնաւոր Թագաւոր մը կամ տէրապետ չունի, այլ քանի մը իշխանապետութիւն կամ յաւ եւս է ըսել, ապստամբապետութեան բաժնուած է, որոնց թիւն այսօրուան օրս չորս է, եւ տիրապետաց անուններն ալ հետեւեալներն են. Տէճած Քասա, Թէկրիի երկրին իշխան. Վաքշում Կօվազի, Ամարայի. Մէնիլիք (որ Թագաւորազն ըսել է եւ Հապէշցիք կը կարծեն որ նոյն սերունդը Դաւիթ մարգարէի ցեղէն սերեալ է), Շօաի երկրին. եւ Կօալի Տէսթա, Կօճամի իշխան. սակայն այս թիւը երբեմն կամ աւելի եւ կամ մէկի կիջնայ, որովհետեւ տիրապետութիւնը աւելի զօրաւորնին է. ով որ յաղթօղ ելնէ, ան կը գրաւէ այս ինչ կամ այն ինչ երկիրը. այնպէս զի բոլոր Հապէշաստան ապստամբութեան կեդրոն մը դարձած է միշտ. այսօրուան իշխանաց մէջ միայն Տէճած Քասան դարուս քաղաքակրթութեան խիստ համակիր կերեւի, եւ կաշխատի որ օր ըստ օրէ իւր տիրապետական երկիրը ընդարձակելով բոլոր ժողովրդեան կացութիւնը բարւոքէ. բայց որովհետեւ զօրութեամբ միայն կրնայ հասնիլ իւր նպատակին, Անգղիոյ կառավարութենէն պաշտօնակալ մը խնդրած է որ իւր զօրքերը եւրոպական ձեւով կրթէ. նա ալ անմիջապէս Գըրնէլ (գնդապետ) Գըրհամ անուն մէկը ղրկեր է, որ հիմա զօրաց կըրթութեանը կը պարապի եղեր, ինչպէս նաեւ ուրիշ եւրոպացիներ ալ բերել տուեր է թէ՛ թնդանօթ եւ գնտակ ձուլելու, եւ թէ՛ զէնք ու վառօդ շինել տալու համար:

Նամակիս երկարութեանը համար ընթերցողաց ներողամտութիւնը խնդրելով, եւ յուսալով որ տրուած մանրամասն տեղեկութիւնները հետաքրքրական կըրնան ըլլալ համազգեաց, Մնամ.

Տր. Գ. Յ. Մուշէղեան:
(Մասիս Թ. 407):

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

Դեկ. 5:—Վանահայրն ս. Աստուածածին Անապատի Ագուլեաց՝ ծերունի Արժ. Ահարօն վարդապետն Տէր Գրիգորեանց, ըստ խնդրանացն արձակեցաւ յիշեալ Անապատի վանահայրութեան պաշտօնէն, և փոխադրեցաւ 'ի ս. Գրիգոր Լուսաւորչի վանքն Շօռոթայ:

„ 19:—Շամախւոյ Վիճակին Կօնսիստորիոյ առաջարկութեան համեմատ՝ Թօփիշէն գեղջ Խարայէլ քահանայն Սարգիսբէկեան, յաղագս ծայրայեղ անհնազանդութեան և անուղղայ գնացիցն՝ խափանեցաւ քահանայական պաշտօնէն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐՕՆԸ

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԹՇՆԱՄԻ ԶԷ:

Աշխարհիս մէջ կան այնպիսի կրօնք՝ որ գիտութեանց հետ չեն կարող ընկերանալ. բայց Քրիստոնէական կրօնը կարող է համաձայն և անվեհեր հաշտութեան ձեռք կարկառել ամենայն գիտութեանց և նոցա հետ զուգընթաց գնալ: Գիտութիւնը սահմանելով ասացք հմտութիւն բնութեան անյեղլի օրինաց նոցին և իրերաց հետ կցորդուած արարածոց և նոցա մասամբ վերաբերութեանց, ճշմարիտ կրօնին ոչ եթէ վնասելու անկարող պէտք է լինի, այլ հարկաւոր է որ ճշմարիտ կրօնը իբրև թագուհի ի մէջ օրինաց և ազատութեանց՝ ծառայութիւն ընդունի ի համօրէն գիտութեանց:

—Ուրեմն ի՞նչ աղբիւրէ ծագում առած է այն կարծիքը, թէ Քրիստոնէական կրօնն գիտութեանց բարեկամ, չէ՛ և անոր պաշտօնեաներն գիտութեանց թշնամի են:

Ըստ իմ կարծեաց այս ցուրտ զրպարտութիւնը օտարներէն անցած է մեզի, և այս խօսքերուն բուն հեղինակները ուրիշ ազգաց մէջ նայելու է. բայց մեր ազգային մէջ տարածուիլն և իբրև ճշմարտութիւն ընդունողներ գտնուիլն կողմնակի տեսութեան արդիւնք և անզգոյշ հետևողութեան պտուղ պէտք է համարել: Մենք չենք ժխտեր ազգային եկեղեցականութեան ներկայ վիճակը, որ սակաւ բացառութեամբ տգիտական է. բայց այս ցաւալի վիճակին բուն պատճառն ինչպէս որ ազգութիւնը չէ, նոյնպէս և ոչ իսկ Քրիստոնէական կրօնը՝ ոչ ուղղակի և ոչ իսկ անուղղակի կամ բացառիկ պայմանի մը ներքև: Ասոր հակառակ թիւն կը համարինք և տարապարտուց զըրպարտութիւն ընդդէմ սրբութեան կրօնի՝ կարծելն թէ կրօնն գիտութեանց բարեկամ չէ, և իւր պաշտօնեայներն գիտութեանց թշնամի են: Եթէ այսպէս էր, հարկաւոր էր կրօնի աւանդութեանց մէջ սկզբունք մը կամ դրութիւն մը ցոյց տալ, որով կրօնն և գիտութիւնք անջրպետէին իրարմէ. նոյնպէս ամէն ժամանակի մէջ և առանց բացառութեան՝ Քրիստոնէական կրօնի պաշտօնեայներն ներկայացունելու էին գիտութիւններն արհամարհող տգիտաց խումբ մը. բայց պարզ հայեցողութիւն մը դէպի Աստուածաշունչ սուրբ գիրքն և ազգային պատմութիւնն՝ սորա ընդհակառակը ցոյց կուտան մեզ:

Աստուածաշունչ սուրբ գրոց թէ Հին և թէ Նոր Կտակարանաց եթէ՛ պատմական եթէ՛ վարդապետական և եթէ՛ օրէնսդրական մասանց մէջ չէ՛ հնար նկատել այնպիսի մի սկզբունք կամ դրութիւն, որ ընդհանրապէս բոլոր գիտութիւնները, կամ ի մասնաւորի այս կամ այն գիտութիւնը անօգուտ, վնասակար և խորշելի համարի. ընդհակառակն Հին Կտակարանին նախնական ժամանակներուն գլխելով կը տեսնենք որ Աստուածաշունչն մարդկութեան նախահայրն կը ներկայացունէ գիտուն և իմաստուն մարդ մի, ոչ եթէ ուսմամբ կամ հետևողութեամբ այնպէս եղած, այլ Աստուծոյ ձեռքը անեղծ վիճակի մէջ ստեղծագործուած ժամանակ այդ բաներն իբրև օժիտ պարգև տրուած իրեն: Ադամ առանց դպրոցի և ուսումնարանի աշակերտութեան քաջ բնապատում և ճարտար երկրագործ էր, ինչպէս յայտնի է իւրաքանչիւր կենդանեաց իրենց բնութեան համեմատ յարմար անուններ դնելէն, և դըրախտին նման վայելուչ և գեղեցիկ պարտէզ մը մշակելէն. այս երկու առարկայներն հինց գիտութեանց ճիւղերուն մէջ մասնաւոր տեսակներ են, զորս աշխատութեամբ և հանապազօրդ փորձերով մարդիկ կ'ջանան կատարելագործել: Ի՞նչ էր Ադամայ անկեալ վիճակը, եթէ ոչ տգիտութեան խաւար մը՝ որ մարդուս իմացական կարողութիւնները մթացնեց, որուն մէջ մարդ իւր հոգւոյն և մարմնոյն պիտոյքն հայթայթելու համար աշխատութեան պէտք պիտի ունենար: Եթէ հաց ընելով պէտք է նկատել բուն հոգւոյն պէտքերն, և գլխաւորապէս մեր մարմնոյն պիտոյքը, ուրեմն Ադամայ անկեալ վիճակը կրնանք նկատել այնպէս՝ որպէս մի տգիտական վիճակ, յորում 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ բաժնեցեալ մարդը ինքզինքը խնամելու համար մեծ գիտութեամբ զարգացնելու պէտք ունի. որպէս զի իմանայ թէ հոգւոյն պիտոյքներն ի՞նչ են, և մարմնոյն

կարօտութիւններն՝ ի՞նչ։ Եթէ մարդս անհատականութեան մէջ այսպէս, որչափ և առաւել ընկերական կենաց վիճակի մէջ․ յորում ամենչութեանց և ընկերական յարաբերութեանց հետ պիտոյից և կարօտութեանց և հետևապէս գիտութեանց սահմանները և ևս կընդարձակին։ Ո՞չ ապաքէն Իսրայէլացւոց առաջնորդ ըլլալու սահմանուած Մովսէսը՝ մի Եգիպտացի իմաստունէ աւելի իմաստուն մարդ էր, որ իւր մանկական հասակին մէջ կատարելապէս կրթուեցաւ եգիպտական դպրոցներու մէջ։ Ո՞վ էր Իսրայէլի թագաւորաց մէջ ամէնէն հռչակաւորն Սողոմոն, եթէ ոչ մի գիտուն և իմաստուն տէր գերազանցեալ իւր նախորդ և ժամանակակից իմաստուններէն, և անհաւատալելի յառաջադիմելից․ ի՞նչ էին արդեօք նորա գիտութիւնները, մինչ ըսենք որ ինք խօսի, «Զի ՚նա ետ ինձ զանսուտ գիտութիւն զէակաց, գիտել զհաստատութիւն աշխարհի, և զազդեցութիւն բնութեանց։ Զսկիզբն և զկատարած և զմէջ ժամանակաց․ զշրջանաց փոփոխումն, և զշրջել ժամանակաց։ Զտարեաց բոլորմունս և զաստեղաց դիրս։ Զբարս անասնոց, և զգազանութիւն գազանաց․ զհողմոց բռնութիւնս, և զխօսս մարդկան․ զպիտակութիւնս տնկոց․ և զզօրութիւնս արմատոց․ որ ինչ ծածուկ և որ ինչ յայտնի՝ գիտացի»։ Իմաստ. է. 17-21

Արդ եթէ այս խօսքերուն մէջ յիշուած գիտութիւններն այժմու ժամանակիս ճանչցուած անուններուն վերածենք, կ՚տեսնենք որ Սողոմոնի իմաստութիւնը բովանդակողներն էին աշխարհագրութիւն տեսակներուն, աստեղաբաշխութիւն, թուաբանութիւն, տումարագիտութիւն․ ժամանակագրութիւն, երկրաչափութիւն, բնական պատմութիւն, զանազան լեզուներ, անկաբանութիւն, բժշկութիւն, որոց գիտութիւնը իմաստութիւն համարելով, կըսէ թէ այս ամէնը յԱստուծոյ շնորհեցաւ իրեն, Իմաստ. է. 21։ Այսպէս բոլոր սուրբ գրոց մէջ չէ՛ հնար նշմարել մի այնպիսի տեղ, որ տգիտութիւնը մարդկային կենաց անբնական վիճակ չհամարուի, մանաւանդ առակաց և իմաստութեան գրոց մէջ արարածոց գիտութիւնը միշտ գովուած և հռչակուած է իբրև մի Աստուածային պարգև։ Հարկ է արդեօք ՚Նոր Կտակարանն ևս հետազօտել այս մասին վարդապետութիւն մը ձեռք բերելու համար։ Ձանձրութենէ խորշելով աւելորդ աշխատութիւն կ՚համարենք այդ, և բաւական կ՚սեպենք Աւետարանչին վկայութիւնը Տեառն մերոյ մանկական հասակին նկատմամբ, «Յիսուս զարգանայր իմաստութեամբ և հասակաւ և շնորհօք յԱստուծոյ և ՚ի մարդկանէ»․ Ղուկ. Բ. 51։ Այս զարգացումը կ՚նշանակէ Յիսուսի մարմնոյն հետ նորա մարդկային մտաւորական կարողութեանց օրըստօրէական աճումը պատուական իմաստութիւններով՝ որոյ առարկաներն են արարածք և մեր անձէն դուրս եղած նիւթեղէնք։ Այս տեսութիւնը բաւական է հերքելու այն թիւր կարծիքը թէ ըստ ինքեան Քրիստոնէական Կրօնն ապաքէն գիտութեանց թշնամի է, և ապացուցանելու թէ ոչ միայն նորա պաշտօնեաներն թշնամի չեն գիտութեանց, այլ և մեծամեծ և նշանաւոր գիտուններ մեծ նշանակութիւն ունեցեր են կրօնի ասպարիզին մէջ։

Այսպէս դարձունելով մեր նկատողութիւնը մեր Ազգային Եկեղեցականութեան վերայ, նորա այժմու վիճակը պէտք չէ առարկել վերոյիշեալ ճշմարտութեանց դէմ․ վասնզի մեր տգիտութիւնը եթէ հինութիւն ըներ մի կրօնական վարդապե-

տութեան կամ սկզբունքի, հարկ էր 'ի սկզբանէ անտի մինչև ցայսօր առանց բացառութեան մեր կրօնի պաշտօնեայներն լինէին տգէտ և գիտութեան անհոգ մարդիկ. սակայն ներկայն և անցելոյ պատմութիւնը չեն արդարացուներ այդպիսի դատաստան: Պատմութիւնը ցոյց կու տայ մեզ Եկեղեցական վերին իշխանութեան գաւառկարգին մէջ նշանաւոր Կաթողիկոսներ, որ վերաբերութեամբ իրենց ժամանակին արժանի եղեր են իմաստուն համարուել. նոյնպէս ապացոյցներ ունիմք հաստատելու թէ, ամեն ժամանակ մեր ազգին մէջ գիտութիւնք առաւելապէս մշակուեր և ծաղկեր են Եկեղեցականաց ձեռօք: Տգիտութիւնը՝ որ գիտութեանց և արուեստից ծաւալելուն հզօրագոյն միջոցն և առիթն եղաւ, առաջին անգամ մեր Ազգին մէջ Եկեղեցականաց ձեռօք մուտ գտաւ և ծաղկեցաւ:

Մինչև հիմայ բացուածներէն կ'հետևի ուրեմն՝ որ այս ցուրտ զրպարտութեան փաստաբաններն՝ եթէ, սաստիկ միամտութեամբ խաբուած չեն, խաբէութեամբ կ'ջանան հասնել իրենց ծածկեալ նպատակին, և առոր համար առանց ընդհանուր ազգին մասնաւորական զարգացման վիճակը հաւաքապէս նկատելու, մի միայն եկեղեցականութեան վերայ կ'ամփոփեն իրենց տեսութիւնը, որպէս թէ նա առանձին և որոշ մարմին մը լինէր ամենևին անկցորդ աշխարհական — ընկերական մարմնոյն. և այս ծուռ տեսութիւնն շառաւիղէն նկատելով այն մեծ և վնասակար սխալման դուբը կ'գլորին, մասնաւորելով եկեղեցականութեան վերայ ինչ որ ընդհանուր ազգային ընկերական մարմնոյն վրայ պէտք էր ասել: Ըստ այսմ փոխանակ կրօնն և կրօնականութիւնը զրպարտելու իբրև թշնամի գիտութեանց, Հայն և հայութիւնը հարկ էր ամբաստանել միմնոյն յանցանքով, որ է անմտութիւն անմտութեանց:

ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Վանահայր Արմաշու վանուց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ. — ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ՝ ՈՒՍԵԱԼ ԶԱՒԱԿՆԵՐ ՊԷՏՔ ԵՆ.

Ա.

Ամէն լուսաւոր փափաքող ունեցող ազգային՝ նկատելով Եւրոպացւոց օրէցօր թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս զարգացումը և Հայաստանի այժմեան աղքատ և անտարբեր վիճակը՝ հետևեալ կերպով կը խօսին իրարու. «Եղբայր, Հայաստանի լուսաւորութեան համար՝ ուսեալ զաւակներ պէտք են, ուրեմն (հետևցնում են) նախ՝ Եկեղեցւոյ ընտիր և գործունեայ ժառանգաւոր հասցնելու համար՝ ամէն նիւթական կարողութիւն ունեցող վանքերի մէջը հաստատուին կղերանոց կամ ընծայարան, Ճեմարան, և Ընծայարան. այս օրինակը ահա՛ գործնականապէս ցոյց տուին մեր Վեհափառ Հայրապետ Գէորգ Դ. Սրբազնագոյն Կաթողիկոսն, և սուրբ Երուսաղէմայ Արժանընտիր Պատրիարք Եսայի Սրբազան Արքեպիսկոպոսն. որոնց ընդհանուր Ազգի յոյսը պատելու, և մեր նախնի մեծագործ-ուլք հայոց գովելի գործոց նորոգիչ համարուելու արժանաւորութիւնն ունեցան. երանի՜ թէ միւս եւելի վանքերն* էլ նոցա օր-

*) Այն այս յօդուածը գրող Արժ. Քահանայն ինչպէս կերևի, տեղեկութիւն չունի Նիկոմիդիոյ մերձ Արմաշու Չարխափան Ս. Աստուածածնի վանուց վերայ. որ իբր քառասուն տարիներէ ի վեր ունի Ժառանգաւորաց Ուսումնարան, որ ըստ բաւակա-

նիւ օրինակին հետեւելու պարտքն ունենային (թէ և նորանցից ոմանք սկսեցին՝ բայց հազիւ թէ Յօնանու գրչենու չափ կեանք ունեցան). տարակոյս չկայ որ այնպիսի վանքերից դուրս գան 'ի ժամանակին՝ ուսեալ բարեկիրթ և գործունեայ Եկեղեցական հովիւներ, և գաւառական Ուսուցիչներ, զի Հայաստանի այժմեան «հունձք բազում են, և մշակք սակաւ»։

Բ.

Բայց ժողովուրդ (ասում են) ուսումնասիրութեան և բարոյականութեան վարժեցնելու համար՝ հաստատուն ամէն քաղաքների մէջը հասարակաց ընթերցարաններ և թատերական հանդիսարաններ. ընթերցարանների մէջ գտնուին զանազան տեսակ ազգային հին և նոր գրքեր, պարբերական թերթեր և ամէն տեսակ լրագիրներ. ուր անխտիր կերպով ամէն մարդ ազատութիւն ունենայ պարապոյ ժամերը այնպիսի հաստատութեանց մէջ անցկացնել. իսկ թատերական բեմերի վրայ կը տեսնայ ժողովուրդ կրթական զուարճալի ներկայացումներ, և կը լսէ գործնական քարոզներ, որոնցից բաւական օգուտներ կը քաղէ. զի բարոյականութեան մէջ կը կրթուի և ազգասիրական ոգւով կը վառուի. և այս միջոցներով Ազգը կը յառաջադիմէ դէպ 'ի լուսաւորութիւն ինչպէս որ Եւրոպացիք ընթերցասիրութեամբ սատացած են։

Գ.

Չախահաս տղայոց համար էլ (ասում են) հարկաւոր են գիշերօթիկ և կիւրակնօրեայ դպրոցներ, որոնք հեռացած իրանց ծնօղաց փաղաքշանքից և վատ գայթակղեցուցիչ օրինակներից՝ ամէն ուսմանց առարկաների վրայ ուշադրութիւն դարձնելով՝ կարող են սուղ ժամանակի մէջ սովորել, և բարոյականութեան մէջ կատարելապէս կրթուիլ. նմանապէս և կիւրակէի դպրոցներում կարող են յաճախել՝ կիրակի օրեր՝ արհեստի գնացող չախահաս պատանիներ, փոխանակ անօգուտ խաղերի հետ պարապելու՝ գնան այնպիսի դպրոցները, իրանց թերի թողած ուսմունքը կատարելագործելու. իսկ հասարակ ուսումնարանաց և դպրոցաց համար էլ՝ (ասում են) արդէն բացուածները բարեկարգել նոր լուսաւոր մեթոդներով, և չեղած տեղերումն էլ՝ բանալ արդիւնաւոր դպրոցներ, և կառավարել ազգային նպաստներով կամ աղբիւրներով։

Դ.

Ուրեմն մնայ մեզ խօսիլ Հայաստանի հիմնական լուսաւորութեան միջոցի վրայ, այսինքն՝ պատրաստել ապագայի համար ուսեալ և բարեկիրթ սերունդ։ Սորա պէտք է ուսեալ և բարեկիրթ մայրեր ունենալ՝ և հետևապէս պահանջել և ուսեալ սերունդ. ուրեմն Հայաստանի (այսինքն Հայ գտնուած) ամէն քաղաքների և գիւղերի ապա-

---

նին արդիւնաւոր ձանդիսացած է, ըստորում նոյն վանուց այժմեան Գեր. Վանահայրը եւ Արժանապատիւ Միաբանութիւնը եւ Ուսումնարանի դասատուք, նոյն իսկ ուսումնարանի աշակերտներէն են, որք ձեռք ձեռքի տուած, անձնանուիրութեամբ կաշխատին ապագային համար ձեռնհասէ յուսալէտ Եկեղեցականներ պատրաստել յօգուտ Ս. Եկեղեցւոյ մերոյ եւ Ազգի. Նա եւ երեք տարիէ ձետէ, «Յոյս» անուամբ քառանօրեայ ձանդէս կը ձրատարակեն, ընտիր եւ պիտանի նիւթոց բովանդակութեամբ: Ուստի արժան է, որ համայն մեր սիրելի Ազգայինք մեծ հասարակութեան եւ օգտակարութեան ցոյց տան այն անձնանուէր եւ Արժանապատիւ միաբանութեան, եւ ստանան եւ ընթեռնուն նորա «Յոյս» ձանդէսը. որով անշուշտ ինչպէս սիրելի Ազգայինք; նոյնպէս եւ այն Միաբանութիւնը ոչ սակաւ մխիթարութիւն եւ քաջալերութիւն պիտի զգան փոխադարձաբար: Ծ. Խմբ.

կան սեռի դպրոցների համար՝ հարկաւոր է ունենալ և իգական սեռի բարեկարգ դըպրոցներ, որոց մէջը ամէն ուսմունքներից փոքըր 'ի շատէ ուսեալ Օրիորդները քանի տարիից յետոյ՝ պիտի նոր սերունդների նախադաստիարակ մայրեր լինին։

Ե.

Մի նոր լեզուն բացուած մանուկ, երբ սկսած է հասակով օրէ ցօր զարգանալ, նորա համար մայրենական սնընդեան հետ՝ կարեւոր է և հոգեկան սնունդ. նախ՝ կը ցանկայ իմանալ իւր և աշխարհի արարածոց սկիզբը և կառավարողը, Եկեղեցին և նորա սուրբ խորհուրդները, Արեգական, Լուսնի, Աստեղաց և երկնքի ինչութիւնը, անձրևի, ձիւնի, կարկտի, երկրաշարժի, ծիածանի, կայծակի, որոտումի, ամպերի և տարուան չորս եղանակաց պատճառները, աշխարհիս մէջը գտնուած ծովերի, լեռների և քաղաքների անունները, և նոցա բընակչաց թիւը, կենդանեաց տեսակները և նոցա բնաւորութիւնները, ծառերի, ծաղիկների, և խոտերի աճեցումները, հանքային նիւթոց յատկութիւնները, լսել հարկաւոր օգտակար և զուարճալի պատմութիւններ, սովորել փոքր 'ի շատէ կարդալ և գրել, և մանր մունր թուահաշիւներ, վերջապէս մի նոր մտաւորական ախորժակ կ'ունենայ նոր բաներ խորհելու. խօսելու լսել և գործել՝ առանց չարը բարիից որոշելու։

Զ.

Ուրեմն այնպիսի դեռահասակ մանուկների դաստիարակելու համար՝ հարկաւոր է ունենալ ճշմարիտ ուղղափառ կրօնի սկզբունք, բնական և քաղաքական աշխարհագրութեան, բնագիտութեան գիտելեաց, թուաբանութեան հաշիւների և բարոյականութեան կանոններին փոքր 'ի շատէ, ածղէակ և կրթուած մայրեր, որոնց խնամոց ներթափուած փոքրիկ մանուկներ՝ արդէն նախակրթուած և ճշմարիտ դաստիարակութեամբ զարգացած՝ մի ժամանակից յետոյ՝ մտնում են Ուսումնարան, այնուհետև սկսում են ինքնայօժար սիրով և շատ դիւրին կերպով, և մանաւանդ կարճ միջոցում սովորել կարեւոր ուսմունքներ, և լինել Հայրենեաց համար օգտակար անդամ. զի այն կերպով կրթուած մանուկների համար ունակութիւն եղած է մայրենական սննդեան հետ և հոգեկան սնունդ։ Ահա այս միջոցն է, որ 'ի գործ դրած են թէ Եւրոպացիք և թէ Ամերիկացիք. որով և այժմ զարգացած են թէ նիւթական և թէ բարոյական յառաջադիմութիւններով։ Ուրեմն նոցա օրինակին հետեւելու, և զարգացման տարիքներին հասնելու՝ պատրաստենք ուսեալ մայրեր, որով և ունենանք ուսեալ սերունդներ՝ Հայաստանի լուսաւորութեան համար։

ՄԵՍՐՈՎԲ ՔԱՀԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆՑ։
Էջմ. Աշտարակ։

ՀԱՆԵԼՈՒԿՔ

1.

Այն ո՞ր կառքն է երկաձի,
Որ մի աշխարհ ինքեամբ ածի,
Ուր և կամի, շրջի, հանգչի,
Առանց անուի և հոլովի.

2.

Այն ո՞ր տունկն է անհաստատ,
Արմատն ի վեր, ոստքն ի վայր,
Որ տայ պտուղ միշտ անընդհատ,
Մերթ քաղցրահամ, երբեմն էլ վատ։

Յովհաննէս Միրզաբէկեանց։

Դեկտ. ամսոյ Հանելուկն է Հրդեհ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ